Azg
Azg

Սեպտեմբեր 15 Չորեքշաբթի 1993

ՈԱՄԿՈՒՍՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
9 տարի, թիվ 177 (428)
գինը 10 ռ.
դասիչ 69149
Երևան 375010
Հանրապետության 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Մոսկվա

Այսօր Տեր-Պետրոսյան-Ելցին հանդիպում

Այսօր աշխատանքային այցով Մոսկվա կժամանի ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ՌԴ նախագահ Բորիս Ելցինին հանդիպելու նպատակով: Նկատի ունենալով, որ երեկ Երևանում տեղի ունեցած Լևոն Տեր-Պետրոսյան-Ռոբերտ Քոչարյան հանդիպման ժամանակ քննարկվել են Մինսկի խմբի ոչ պաշտոնական խորհրդակցությունների եւ Ադրբեջանի ու ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների բանակցությունների արդյունքները, Ռուսաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ ամենայն հավանականությամբ կքննարկվեն ոչ միայն վերը նշված հարցերը, այլեւ Հեյդար Ալիեւի եւ Թանսու Չիլլերի մոսկովյան հանդիպումների արդյունքները:

«Ազգ»

Մոսկվա

Հայ-ռուսական պայմանագիրը՝ դեռեւս վաղ

Ուրբաթ օրը Ռուսաստանի Գերագույն խորհուրդը վավերացրեց Հայաստանի եւ Ռուսաստանի խորհրդարանների միջեւ համագործակցության մասին համաձայնագիրը: Այդ օրը Ռուսաստանի խորհրդարանում էր գտնվում նաեւ Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Ֆելիքս Մամիկոնյանը: Երեկ հեռախոսային զրույցի ընթացքում պրն. Մամիկոնյանը մեզ հայտնեց, թե համաձայնագիրը ստորագրվել էր դեռ այս տարվա հունիսի 6-ին, երբ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը Մոսկվայում հանդիպեց ՌԴ ԳԽ նախագահ Ռուսլան Խասբուլատովի հետ: Սակայն նա ասելով, որ ռուսական խորհրդարանի համար անսպասելի էր հատկապես այն փաստը, որ քվեարկության կողմ քվեարկեց 151 պատգամավոր, չկար ոչ դեմ, ոչ ձեռնպահ: Մեր այն հարցին, թե ինչո՞ւ է ձգձգվում Ռուսաստան-Հայաստան միջպետական համաձայնագրի վավերացումը, դեսպանը նշեց, որ իր կարծիքով ավելի լավ է այդ հարցը չբարձրացնենք, քանի որ նախ՝ ըստ էության պայմանագիրը ինչ-որ կերպ գործում է եւ հետո՝ անհրաժեշտ է բոլորովին նոր պայմանագիր պատրաստել: Նրա ասելով, ներկա պայմանագիրը կազմվել է 1991-ի դեկտեմբերին, երբ բոլորովին այլ քաղաքական ու տնտեսական իրավիճակ էր, իսկ հիմա՝ այլ: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ ԱՊՀ շրջանակներում կնքված նոր համաձայնագրերի մեջ արդեն ինչ-որ կերպ ներառվել են այդ պայմանագրի մի շարք կետեր, արդա ավելի պարզ կդառնա նոր երկկողմ պայմանագիր գրելու խնդիրը: Անդրադառնալով Մոսկվայում տեղի ունեցած հայ-ադրբեջանական եւ ռուս-ադրբեջանական բանակցությունների արդյունքներին, դեսպան Մամիկոնյանը նախ նշեց, թե Հեյդար Ալիեւը այդ հանգամանքը որոշ չափով օգտագործեց նաեւ ընտրություններից առաջ իր հանրաքվեությունում հեղինակությունը բարձրացնելու համար, բայց մյուս կողմից էլ մեծ խայթ էր, որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղին ճանաչելով որպես սուբյեկտ, նստեց բանակցությունների սեղանի շուրջ: Այդ առումով նա կարեւորեց Հայաստանի դիրքորոշումը՝ Ղարաբաղին ասիճանաբար ինքնուրույն ճանաչվող միավոր դարձնելու քաղաքականությունը: Պատասխանելով մեր այն հարցին, թե ինչով է պայմանավորված այսօր Մոսկվայում կայանալիք Ելցին-Տեր-Պետրոսյան հանդիպումը, դեսպանն ասաց, որ որեւէ անմիջական կապ չի տեսնում Ալիեւի այցի հետ, քանի որ Հայաստանի նախագահը հաճախ է հանդիպումներ ունենում Ռուսաստանի նախագահի հետ, թեեւ բնականաբար այս այցի ընթացքում չեն կարող չարծարծվել նաեւ ռուս-ադրբեջանական հանդիպման արդյունքները: Դեսպանը նշեց, որ վերջերս նկատվում է նախագահների մեծ աշխուժություն. երկու անգամ Մոսկվա ժամանեց Կրավչուկը, այնուհետեւ Նազարբաեւը եւ այդպես շարունակ: Վերադառնալով հայ-ռուսական պայմանագրի թեմային, նշեմ, որ Հայաստանի պատասխանական լրատվական ծառայություններում մեզ այդ մասին ոչինչ չկարողացան ասել: Իսկ արտգործնախարարի առաջին տեղակալ Արման Կիրակոսյանը նշեց, որ արդեն 1,5 տարի է, ինչ Հայաստանի խորհրդարանը չի վավերացնում հայ-ռուսական միջպետական պայմանագիրը, եւ այդ հարցում իրենց բացասական դերն են կատարում արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ու որոշ խորհրդարանականներ:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Կարգավորում

ԱԴՐԲԵՋԱՆ-ՂԱՐԱԲԱՂ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հրադադարը երկարաձգվեց մինչեւ հոկտեմբերի 5-ը

Սեպտեմբերի 13-ին Մոսկվայում ավարտվեցին Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչների բանակցությունները, որոնց արդյունքում Ռուսաստանի միջնորդությամբ կողմերը պայմանավորվեցին հայ-ադրբեջանական հակամարտության շրջանում հրադադարը երկարացնել մինչեւ հոկտեմբերի 5-ը: Ինտերֆաքսին հաջաստեղյակ աղբյուրներից հայտնի է դարձել նաեւ, որ կողմերը ձեռք են բերել բարձր մակարդակի երկկողմ հանդիպման պայմանավորվածություն, որը հնարավոր է տեղի կունենա Մոսկվայում մինչեւ հոկտեմբերի 5-ը:

Ըստ Սնարֆ-Թուրանի տեղեկատվության, հանդիպմանը կմասնակցեն Հեյդար Ալիեւն ու ԼՂՀ ԳԽ նախագահի պատասխանատու Կարեն Բաբուրյանը, իսկ ըստ Ինտերֆաքսի, ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ու Հեյդար Ալիեւը: Մինչ այդ, սեպտեմբերի 13-ի մոսկովյան բանակցությունների արդյունքում ընդունված կոմյունիկեում ասվում է, թե կողմերը եկել են այն համոզման, որ տարիներ շարունակվող հակամարտությունը խլել է հարյուրավոր կյանքեր, չկա եւ չի կարող լինել ուժային որոշում, եւ երկուսերի անվստահությունը հաղթահարելու ճգնման հույս են հայտնել:

Կողմերը նաեւ հաստատել են իրենց պատրաստակամությունը՝ քննարկել Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման հետ կապված հարցերի ողջ շրջանակը եւ առաջին հերթին ռազմական գործողությունների անհապաղ դադարեցման, գրավված տարածքներից զորքերի դուրս բերման եւ հաղորդակցության ուղիների վերականգնման հարցերը:

Ըստ կոմյունիկեի, հանդիպման մասնակիցները կարեւորում են վիճելի հարցերի փուլ առ փուլ լուծումը: Մեծ տեղ է տրվում նաեւ ԵԱՀԽ Մինսկի խմբի խաղաղարար գործունեությանը:

Հանդիպման ժամանակ քննարկվեցին նաեւ գերիների եւ պատանդների փոխանակման հարցերը: Արկադի Ղուկասյանը հայտարարել է, որ երկարաժամկետ զինադադարի կնքման համար Ղարաբաղը լուրջ երաշխիքների կարիք ունի, հակառակ դեպքում Ադրբեջանը ռազմական գործողությունների դադարեցումը կարող է օգտագործել հաջող հարձակմանը նախապատրաստվելու համար: Նախարարի կարծիքով, այդպիսի երաշխիք կարող էր լինել ԼՂՀ-ի անկախության ճանաչումը, ինչը թույլ կտա նրան, որպես անկախ պետության, հանդես գալ ադրբեջանական տարածքի վրա հարձակվելու դեպքում օգնության խնդրանքով դիմել այլ երկրների եւ միջազգային կազմակերպությունների: Արկադի Ղուկասյանը նաեւ նշել է, թե եթե Ադրբեջանը ճանաչեր ԼՂՀ-ն, մինչեւ հիմա այդման զոհեր չէին լինի: Իր հերթին Ջալիլովը հայտարարել է, թե բանակցությունների ընթացքում ԼՂՀ կարգավիճակի հարցը չի քննարկվել: Պատասխանելով ԻՖ-ի այն հարցին, թե որքանով է իրական Թուրքիայի եւ Իրանի ներքաշվածությունը հակամարտության ընդլայնումը, Ղուկասյանն ու Ջալիլովը պատասխանել են, թե այդ ոլորտի վտանգ կա եւ, ԼՂՀ արտգործնախարարի ասելով, շրջանում կան ուժեր, որոնք դա ցանկանում են իրագործել: Ա. Ղուկասյանը նաեւ հայտարարել է, թե նախանցած գիշեր Ջեբրայիլի մոտ գտնվող հենակետից կրակ է բացվել Իրանի տարածքի ուղղությամբ: Այդ դեպքը նա համարել է սադրանք՝ ուղղված Իրանի ներքաշմանը եւ հակամարտության ընդլայնմանը: Ջալիլովն իր կողմից ավելացրել է, թե այժմ Ադրբեջանի տարածքում դարաբաղյան ռազմաճակատի երկարությունը կազմում է 1500 կմ, եւ Իրանը ռազմաճակատի գծից գտնվում է ընդամենը 5 կմ հեռավորության վրա:

«Ազգ»

Էջմիածին

Սերբերը վերսկսել են ռմբակոծել խորվաթական քաղաքները

Սերբական ուժերը, արհամարհելով ՄԱԿ-ի ջանքերով հաստատված զինադադարը, անցել են հակահարձակման եւ ռմբակոծել են խորվաթական Կարլովաց քաղաքը: Զագրեբից 30 մղոն հարավ-արեւելք գտնվող այս քաղաքի վրա հարձակումներն սկիզբ են առել Բելգրադում գտնվող ՄԱԿ-ի բարձրաստիճան պատասխանատուներին հիշեցնել, որ քաղաքացիական թիրախների ռմբակոծումը «ծանր ռազմական հանցանք է»:

ՀԱՀ-ում «սպիտակ կառավարումը» վերջանում է

Հարավաֆրիկյան Հանրապետության խորհրդարանը հավանվել է հատուկ նստաշրջանի, որը պետք է սկսի քննարկել «սպիտակ կառավարմանը» վերջ դնելու օրենսդրությունը: Սպասվում է, որ 11-օրյա այս նստաշրջանն առաջին անգամ ՀԱՀ պատմության մեջ սեւամորքներին թույլ կտա կառավարել երկիրը:

Հաիթիի նախկին նախագահը փորձում է վերադառնալ

Հաիթիի նախկին նախագահ Արիստիդը պահանջել է, որ բանակի եւ ոստիկանության ղեկավարները հաջորդ շաբաթ ավարտեն իր մերձավոր զինակցի սպանության հետաքննությունը: Նախկին նախագահը 2 տարվա արտաքսումից հետո նախատեսում էր հոկտեմբերի 30-ին վերադառնալ հայրենիք: ■

Վրաստան

ՇԵՎԱՐԴՆԱՁԵՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՑ

«Ես չեմ աշխատի այն մարդկանց հետ, որոնք թքում են երեսիս», երեկ Վրաստանի խորհրդարանի նիստում հայտարարեց էդուարդ Շեւարդնաձեն:

Իր 10 րոպեանոց զգացմունքային ելույթում Շեւարդնաձեն հերքեց նիստի ընթացքում իր հասցեին հնչած այն մեղադրանքները, թե ինքը բռնատիրություն է հաստատում Վրաստանում: Վրաստանի ղեկավարը հիշեցրեց պատգամավորներին, որ ինքն առաջիններից մեկն է իր ձայնը բարձրացրել Ռուսաստանում բռնատիրության դեմ, պաշտպանել ժողովրդավարությունը Սոչիակ տան մոտ Մոսկվայում: Շեւարդնաձեն հայտարարեց, որ «ինչ էլ լինի», չի լքի Վրաստանը, սակայն այժմ ստիպված է հրաժարական տալ:

Շեւարդնաձեի քաղաքականությունը սեպտեմբերի 14-ին խորհրդարանի առավոտյան նիստում քննադատել էր «Մխեդրիոնի» զինված խմբավորման ղեկավար, պատգամավոր Ջաբա Իոսելիանին:

Միեւնույն ժամանակ, Սնարֆի թղթակցի հետ հարցազրույցում Վրաստանի նախկին վարչապետ Թենգիզ Սիգուան երեկ հայտարարեց, որ «Շեւարդնաձեի որոշումը հրաժարականի մասին վաղաժամ է»: Սիգուայի կարծիքով, քաղաքական բեմից Շեւարդնաձեի հեռանալն էլ ավելի կխորացնի քաղաքական ճգնաժամը երկրում:

Վրաստանի խորհրդարանն իր երեկվա նիստում ձայների ճնշող մեծամասնությամբ որոշեց մերժել Շեւարդնաձեի հրաժարականը: Սակայն վերջինս երեկոյան հայտարարեց, թե խորհրդարանի քվեարկությունը շատ ուշացած է, եւ ինքը հաստատ է մնում հրաժարականի որոշման վրա: Քաղաքական դիտորդների կարծիքով, Վրաստանի ղեկավարը միայն մեկ դեպքում կարող է հետ վերցնել իր հրաժարականը, եթե խորհրդարանը ընդունի երկրում արտակարգ դրություն մտցնելու նրա պահանջը: Երեկոյան Թբիլիսում հանրահավաք տեղի ունեցավ ի պաշտպանություն Շեւարդնաձեի:

«Ազգ»

ՄԱԿ

Մարաթոնն սկսվեց

Սեպտեմբերի 14-ին իր աշխատանքն սկսեց Հայաստանի Գերագույն խորհրդի 7-րդ նստաշրջանը, որը ձեռնամուխ եղավ օրակարգի քննարկմանը: Գերագույն խորհրդի նախագահության առաջարկով քննարկման համար օրակարգ էր մտցվել 139 հարց: Երեկ ամբողջ օրվա ընթացքում օրակարգի քննարկումն այդպես էլ չավարտվեց՝ պատգամավորների ունեցած սկզբունքային տարաձայնությունների պատճառով: Խորհրդարանը քվեարկեց նաեւ Սերժ Սարգսյանի պատգամավորական լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը, կապված վերջինիս ՀՀ պաշտպանության նախարար նշանակելու հետ:

«Ազգ»

Մ. Արեւելք

Իսրայել-Հորդանան համաձայնություն

Մերձավոր Արեւելքում խաղաղության հասնելու գործընթացը նոր թափ է ստացել: Երեկ Վաշինգտոնում համաձայնություն կայացավ Իսրայել-Հորդանան հետագա բանակցությունների օրակարգի հարցերի շուրջ, իսկ երեկոյան, անակնկալորեն Մարոկո ժամանեց Իսրայելի վարչապետ Յիցխակ Ռաբինը, տեսակցություն ունենալու Հասան 2-րդ թագավորի հետ:

Հորդանանցի եւ իսրայելցի բանագնացները ամերիկյան մայրաքաղաքում հաստատեցին առաջադիմության բանակցությունների օրակարգի հարցերը:

Ինչ վերաբերում է Ռաբինի Մարոկո ժամանմանը, դատելով արաբական երկրների շարքում Իսրայելի նկատմամբ Մարոկոյի «հաշտարար» դիրքից, կարելի է ենթադրել, որ երկու երկրները դիվանագիտական հարաբերությունների հաստատման շուրջ համաձայնության գան:

Մյուս կողմից, Իրանի նախագահ Ալի Ակբար Հաշեմի Ռաֆսանջանին երեկ պատասխանատու դեմ արտահայտվեց Իսրայել-ՊԱԿ համաձայնագրին:

Լիբանանում իսլամական Հիզբոլլահ կազմակերպության գրոհայիններ երեկ հարձակում գործեցին իսրայելամետ «Հարավային Լիբանանի բանակի» պահակակետերի վրա, հարուցելով վերջինի եւ իսրայելական ռազմանավատորմի ուժերի պատասխան կրակը: Մինչ այդ, նախորդ գիշեր, Լիբանանի բանակը կրակել էր վաշինգտոնյան համաձայնագրից դժգոհ պաղեստինցի ցուցարարների վրա, սպանելով նրանցից 7-ին եւ վիրավորելով 41-ին:

Երեկ դժգոհության բռնարարքներ գործվեցին նաեւ գրավյալ արաբական հողերում, սպանվեց 3 պաղեստինցի, որոնցից մեկին բռնած ռումբը պայթեց ձեռքում, եւ վիրավորվեց իսրայելցի 2 զինվոր:

«Ազգ»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական համաձայնության Սահմանադրության խորհուրդը 1993 թ. սեպտեմբերի 16-17-ին, ժամը 10:00-ին հանրապետության Կինոյի տան դահլիճում եւ սեպտեմբերի 18-ին, ժամը 11:00-ին Հայաստանի Ազգային օպերայի եւ բալետի թատրոնի դահլիճում հրավիրում է ՍԽՆ, որի ընթացքում քննարկվելու է վեց կուսակցությունների՝ ՀԱԺԿ, ՀՀԿ, ՀԴԿ, ՀՅԴ, ՀՈԱԿ եւ ՍԻՄ կողմից հավանության արժանացած Սահմանադրության նախագծի տարբերակը:

Խորհրդակցության ընթացքում գործելու են հետեւյալ աշխատանքային սեկցիաները՝

1. Մարդու իրավունքների եւ քաղաքացիության հասարակության,
2. Պետականության հիմունքների «օրենսդիր եւ գործադիր իշխանությունների»,
3. Դատական մարմինների,
4. Տեղական մարմինների:

Մուտքը հրավիրատոմսերով: Հրավիրատոմսերը ձեռք բերելու համար դիմել վերը նշված կուսակցությունների կենտրոնական մարմինների գրասենյակներին:

ՔՀՍԽ խորհուրդ

digitised by A.R.A.R.@

ՈՒԿ

Հաղորդագրութիւն Հայաստանի եւ Արցախի համար

Ռամկավար ազատական կուսակցութեան Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Քանադայի շրջանակի 73-րդ տարեկան պատգամավորական ժողովը, կայացած սեպտեմբեր 11-ին Տիքրոյթի մէջ, Միշիկըն, վերարժեւորելով Միացեալ Նահանգներու Արեւելեան ափին եւ Քանադայի մէջ իր կատարած աշխատանքները, որոշեց առաւել եւս ազդու կերպով դիմագրաւել մեր ժողովուրդին եւ մեր հայրենիքին առջեւ հրամայականները, մասնաւորապէս Մ. Նահանգներու եւ Քանադայի պետական-հաղթական շրջանակներուն մօտ տանելով համապատասխան աւելի ազդու աշխատանք:

Ժողովը յատուկ ուշադրութիւն դարձուցաւ հայ-թրքական հաղթականացման հիմնական հարցեր նկատի առաւ՝

ա.- Հայ-ատրպէյճանական թնջուկին խաղաղ կարգաւորումը՝ մէկ կողմէ Արցախի հայութեան ազգային ինքնորոշման ճանաչումով, իսկ միւս կողմէ Հայաստանին եւ Արցախին պարտադրուած ազերի-թրքական շրջափակումին վերացումով.

բ.- Հայաստանի համար զանազան կարգի օժանդակութիւններու ապահովումը՝ բարելաւելու մեր հայրենաբնակ ժողովուրդին կեանքի պայմանները, զօրացնելու մեր հայրենիքը եւ ամրապնդելու ազատական ռամկավարութիւնը.

գ.- Հայ Դատը եւ հայկական իրաւունքները ամենայն առումով, ինչպէս միտք, մանաւանդ երբ Ցեղասպանութեան ճանաչման եւ արեւմտահայ հողերու ազատագրման սրբազան պարտականութիւնը տակաւին մաս չկազմելով Հայաստանի պետական հաղթականութեան՝ հիմնականին մէջ կը շարունակէ ծանրանալ հայկական աւանդական կուսակցութիւններու վրայ:

Հաստատելով, թէ ամէն մէկ հայ, կուսակցական կամ ոչ, տալիք ունի, բաժին ունի բերելիք այս խնդիրներու լաւագոյն կերպով եւ առաւելագոյն արդիւնաւէտութեամբ լուծման համար, նաեւ նկատի առնելով, որ իւրաքանչիւրին տալիքը որոշապէս կը բազմապատկուի՝ երբ հաւաքական ներդրումներու կը միաձուլուի, ուռճանալով զանոնք եւ ուռճացնելով անոնց հետ, Պատգամաւորական ժողովը որոշեց դիմել լայն հանրութեան, որ անդամակցելով ՈՒԿ-ին կամ բոլորուելով անոր ծրագիրներուն շուրջ՝ իր մասնակցութիւնը բերէ մեր ժողովուրդի հաղթական ապագայի կերտումին ի խնդիր:

Ռամկավար ազատական կուսակցութիւնը վճռած է անշեղօրէն ընթանալ Հայ Դատը եւ հայկական իրաւունքները հետապնդելու, ինչպէս նաեւ անկախաբար Հայաստանի իշխանութեանց եւ վարչակարգին նկատմամբ իր ունեցած դիրքորոշումէն՝ հայրենիքին զօրավիգ եւ հայրենաբնակ մեր ժողովուրդին բարոյական սատարելու իր աւանդական ուղիէն:

Ժամն է միասին նոյն խրամատին մէջ գտնուելու: ԴՐԻՆ

Երեւան

Շենքերին ջուր առանց էլեկտրական հոսանքի

«Երեւանի բնակչութեանը եւ ձեռնարկութիւններին տրող ջրի քանակի 70 տոկոսը կախված է էլեկտրական հոսանքից, հայտնեց Երեւանի «Ջրմուղկոյուղի» ձեռնարկութեան գլխաւոր ինժեներ Ա. Կաժոյանը: Քաղաքը սնվում է 15 տարբեր աղբյուրներից: Հոսանքի անջատման կամ հաճախականության անկման հետեւանքով երբեմն քաղաքին տրվող ջրի քանակը կազմում է ընդամենը հատկացված քանակի 20-30 տոկոսը: Միայն սեպտեմբերի 1-6-ը ընկած ժամանակահատվածում քաղաքն ստացել է 1 մլն խորանարդ մետր ջուր»: Երեւան օրական մուտք է գործում մոտ 870 հազար խորանարդ մետր ջուր, որի 40-42 տոկոսը օգտագործում են գործարաններն ու կոմունալ ձեռնարկությունները: Քաղաքի ջրագծերի երկարությունը հասնում է 2600 կմ-ի: Բացի Երեւանից քաղաքի ջրամատակարարման համակարգից օգտվում են նաեւ 200-ից ավելի բնակավայրեր:

«Աշխատում ենք որքան հնարավոր է ջրի բաշխման գրաֆիկը հարմարեցնել հովհարային անջատման գրաֆիկների հետ: Քաղաքի շենքերը բաժանվում են երկու սեկտորի՝ մասնավոր եւ պետական: Վերջիններիս որոշակի մասը ջուրն ստանում է էլեկտրական պոմպերի միջոցով, որոնց թիվը 1000-ից ավելի է: Դարձյալ հոսանքի անբավարարության պատճառով շարժիչները հաճախ վթարվում են, միջինը՝ օրական 10-15 շարժիչ: Իսկ վերանորոգման համար հսկայական միջոցներ են պետք. մոտավոր հաշվարկով մեկ շարժիչի վերանորոգման համար անհրաժեշտ է 30-70 հազար ռուբլի»: Կան նաեւ այլ խնդիրներ, քաղաքի ջրագծերի 30 տոկոսը հնացել եւ չի բավարարում ներկա պահանջներին:

Քաղաք մտնող ջրի մաքրությունը եւ ախտահանումը իրականացվում է ձեռնարկության հիմնարկեր հոլոգիական լաբորատորիայում եւ քաղաքի 11 հորատներում: Հունիսի 27-ին Միացյալ Հայկական հիմնադրամի ինքնաթիռով «Ջրմուղկոյուղի» ձեռնարկությունն ամերիկյան «USAID» կազմակերպության կողմից ստացել է հեղուկ քլորի միջոցով խմելու ջրի վնասազերծման, մնացորդային քլորի քանակությունը որոշող սարքեր, ինչպես նաեւ գաղտնի վթար եւ մեծաղական խողովակներ հայտնաբերող տարբերակներ: Ֆրանսիայից ձեռնարկությունն ստացել է ձեւավոր մասեր, որոնք նախատեսված են տարբեր տրամաչափի ջրագծերի վթարները վերացնելու համար:

Ըստ Կաժոյանի, ջրի կորուստները առավել շատ են բարձրահարկ շենքերում, որտեղ կորչում է ջրի 20-30 տոկոսը: Կորուստները պակասեցնելու նպատակով կատարվում է նոր գծերի շինարարություն, որը հնարավորություն կտա շենքերին ջուր հասցնել չօգտագործելով էլեկտրական հոսանքը՝ ինքնահոսով:

ՆՏ

ՀՀ

500 ձեռնարկություն սեփականաշնորհման

Աղաղեսականացման ծրագրով 1993-94 թթ. նախատեսվում է սեփականաշնորհել մոտ 500 ձեռնարկություն:

Սեպտեմբերի 13-ին «Նաիրիտ» ԳԱՄ-ում աշխատակիցների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների աղաղեսականացման եւ սեփականաշնորհման պետական հանձնաժողովի անդամ Բագրատ Անդրեասյանը նշեց, որ աղաղեսականացման ծրագրով նախատեսվում է 1993-94 թթ. սեփականաշնորհել մոտ 500 ձեռնարկություն, այդ թվում՝ առեւտրի, սննդի, տրանսպորտի եւ այլն, ինչպես նաեւ 29-30 փոքր էլեկտրակայան, որոնք սառեցված կամ անաշխատունակ վիճակում են: Իսկ խոշոր եւ ռազմաստրատեգիական նշանակության ձեռնարկությունների սեփականաշնորհումը կկատարվի համապատասխան օրենքների ընդունումից եւ բանկային համակարգի վերափոխումներից հետո: Պրն. Անդրեասյանն ընդգծեց, որ վաուչերները կտրվեն ՀՀ բոլոր քաղաքացիներին, որոնք կարող են մասնակցել անավարտ շինարարության օբյեկտների եւ պետական ձեռնարկությունների սեփականաշնորհմանը, իսկ ովքեր չեն կողմնորոշվի (հաշվի առնելով ՌԴ փորձը) իրենց վաուչերները կներդնեն ինվեստիցիոն հիմնադրամների միջոցով: Քաղաքացիներին տրվելիք վաուչերների դիմաց կգանձվի միայն տոգրման արժեքը, որը կլինի չնչին:

ՆՏ

Բաքու

Քլինթոնի հատուկ դեսպանորդը հանդիպեց Ալիեւի հետ

BBC ռադիոկայանը հաղորդում է, որ ԱՊՀ-ի գծով ԱՄՆ-ի հատուկ դեսպանորդ Թոլբոտի հետ հանդիպման ժամանակ Հեյդար Ալիեւը ԱՄՆ-ին է դիմել Ղարաբաղի հարցի միջազգային կարգավորմանն օգնելու խնդրանքով: Խնդրագիրը Թոլբոտին հանձնելով, Ալիեւն ասել է, որ Ադրբեջանը շահագրգռված է ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բարելավմամբ: Հանդիպման ավարտից հետո դեսպանորդը նշել է, որ երկխոսության համար լավ սկիզբ է դրված: Ինչպես հայտնեցին Ադրբեջանի լրատվական գործակալությունները, Թոլբոտը Ալիեւին է հանձնել նախագահ Քլինթոնի անձնական ուղերձը: Թոլբոտը Բաքու էր ժամանել Անկարայից, որտեղ հանդիպում էր ունեցել Թուրքիայի արտգործնախարարի հետ: Վերջինս Թոլբոտին Թուրքիայի կառավարության մտահոգությունն էր հայտնել Ադրբեջանում մարտերի դադարեցման գործում անբավարար առաջընթացի առնչությամբ: Բանակցություններից հետո Թոլբոտը հայտարարել է, որ նոր ժողովրդավարական հասարակության կառուցման գործում առաջընթացի հասնելու համար Հայաստանը եւ Ադրբեջանը պետք է խաղաղություն հաստատեն այդ շրջանում: ՆՏ

Ադրբեջանի խորհրդարանը դրական գնահատեց մոսկովյան հանդիպումները

Երկուշաբթի, սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի խորհրդարանի նիստին վարչապետի տեղակալ Աբաս Աբասովը եւ արտգործնախարար Հասան Հասանովը դրական են գնահատել Հեյդար Ալիեւի Մոսկվա կատարած այցի արդյունքները: Մասնավորապես Հասանովը նշել է, որ Ադրբեջանին անհրաժեշտ է մտնել ԱՊՀ կառույցներ անվտանգության երաշխիքներ ստանալու համար: Նախարարի խոսքերով, դա չի անդրադառնա հանրապետության անկախության վրա: Նստաշրջանում Ադրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավարությունը տուր քննադատության է ենթարկվել ներկա իշխանությունների քաղաքականությանը հակադրվելու համար: Նույն օրը Ազգային խորհրդի նիստում ելույթ ունեցավ Ադրբեջանի ներքին գործերի նախարար Նովրուզովը, որը պատգամավորներին տեղեկացրեց սեպտեմբերի 14-ին Բաքվում կայանալիք ԱՄԾ-ի հանրահավաքի մասին: Հանրահավաքի նախօրեին քաղաքում տարածվել են ԱՄԾ-ի թռուցիկները, որոնցում Հեյդար Ալիեւը մեղադրվում է Ռուսաստանի եւ Իրանի հետ համաձայնության գալու, ազգային հարստությունը վաճառելու, անձնական դիկտատուրայի ռեժիմ հաստատելու եւ Ադրբեջանը Ռուսաստանից վերստին կախման մեջ գցելու համար: «Ազգ»

Ավելի մեծ տոկոս նավթադոլլարներից

Կասպից ծովի երեք հարուստ խանութվայրերի ուսումնասիրության հետեւանքով Ադրբեջանը կարող է ստանալ ավելի քան 17 մլրդ դոլլարի օգուտ: Այս մասին է հայտնել Ադրբեջանի նախագահի պատասխանատու Հեյդար Ալիեւը: Նա նշել է, որ այս ծրագիրն իրագործելուն օգնում են Մեծ Բրիտանիայից եւ ԱՄՆ-ից ժամանած մասնագետների խմբերը: Պայմանագրի ստորագրումը Ալիեւը համեմատել է Աբուլֆազ Էլչիբեյի օրոք, այս ամառ կազմված համաձայնագրերին, բայց չի տվել այլ մանրամասներ: Արեւմտյան ֆիրմաների կողմից առաջարկված նախնական տարբերակի համաձայն, այս նավթահորերի շահագործումից Ադրբեջանի եկամուտը ենթադրվում է մոտավորապես 82 մլրդ դոլլարի չափ կամ ամբողջի 71 տոկոսը: Բայց ադրբեջանական կողմը պահանջում է եկամտի 85 տոկոսը: Ադրբեջանի նավթարդյունաբերության բնագավառից իրազեկ մեկը հայտնել է, որ պայմանագիրը կարող է ստորագրվել հոկտեմբեր ամսին, այն բանից հետո, երբ ադրբեջանական պատասխանատուները սեպտեմբերի 20-ին Սլովակիայում կիանդիպեն արեւմտյան ձեռնարկատերերի հետ այս գործի իրավական կողմերը քննարկելու համար: ■

Թուրքիան այլեւս չի՞ սպառնում: Մոսկվա կատարած իր այցից առաջ Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերն սպառնացել էր Հայաստանին պատերազմ հայտարարել, եթե հարձակման ենթարկվի Նախիջեւանը: Սակայն նախագահ Ելցինի հետ հանդիպումից հետո նա հայտարարեց, թէ այլեւս Նախիջեւանին սպառնացող վտանգ չի տեսնում, հաղորդել է Ասոշիեյտեդ պրես գործակալությունը: Գործակալությունն ավելացրել է, որ Ելցինը համաձայնել է իրավիճակի նրա բնորոշմանը, որպես «Հայաստանի ագրեսիա Ադրբեջանի դեմ»: Սակայն ինքը Ռուսաստանի նախագահը չհաստատեց դա եւ հրաժարվեց հակամարտության կողմերից որեւէ մեկի հրադադարային դաստիարակումից, սեպտեմբերի 10-ին նշել է «Բոստոն գլոբ» թերթը: Սնարք

Հանրապետություն

ՅՈՒՆԵՍԿՕ-ում բացվեց Հայաստանի գրասենյակ

Ժնեւում անցկացված պատերազմից տուժածների պաշտպանության խնդրին նվիրված միջազգային համաժողովը, որին մասնակցում էին ՄԱԿ-ի անդամ ավելի քան 150 երկրների եւ 30 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի պատվիրակները, քննարկեց բախումների մեջ գտնվող երկրների կողմից Ժնեւի 1949 թ. կոնվենցիան եւ 1977-ի արձանագրությունները հարգելու հարցը:

Հայաստանի պատվիրակության ղեկավար ՀՀ առաջին փոխարտգործնախարար Արման Կիրակոսյանը երեկ կայացած մամուլի ասուլիսում հայտնեց, որ Ադրբեջանի ներկայացուցիչ Նամիկ Աբասովը համաժողովի ոգուն անհամապատասխան ելույթ է ունեցել՝ Հայաստանին մեղադրելով տարածքների բռնազավթման եւ այլ դաժան գործողությունների մեջ, որի համար նախագահողը նրան մի քանի անգամ ընդհատելուց հետո խնդրել է բողոքել ամբիոնը: Արման Կիրակոսյանն իր պատասխան ելույթում շնորհակալություն է հայտնել միջազգային Կարմիր խաչի կողմից ցուցաբերվող օգնության համար եւ առաջարկել է ստեղծել միջազգային այնպիսի հանձնաժողովներ համապատասխան միջազգային օրենքով քննարկելու համար:

Այնուհետեւ Արման Կիրակոսյանը խոսել է սեպտեմբերի 6-9-ը Փարիզում կայացած Հայ գիտնականների գիտաժողովի մասին, որը տեղի ունեցավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ եւ Առարաս գիտական ակադեմիայի ղեկավարությամբ: Նողատակը սփյուռքահայ եւ հայաստանցի գիտնականների միջեւ կապերի ստեղծումն էր եւ Հայաստանի գիտության զարգացման մեջ նրանց համագործակցությունը: Փոխնախարարը նշեց, որ ավելի արդյունավետ կլինի, եթե նման գիտաժողովներ կազմակերպվեն տարբեր մասնագիտությունների շրջանակներում (գիտաժողովի մասին առաջիկայում.-*խմբ*):

Այդ օրերին ՅՈՒՆԵՍԿՕ-ում բացվեց նաեւ Հայաստանի գրասենյակը եւ այժմ նախատեսվում է այնտեղ նշանակել Հայաստանի ներկայացուցիչ: «Ազգ»

ԱԳՆ

Վ. Փափազյանն ընդունեց Ֆուվեյթահայերին

Սեպտեմբերի 14-ին ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանն ընդունեց Ֆուվեյթահայ համայնքի պատվիրակությանը՝ Արաբական ծոցի Կաթողիկոսական փոխանորդ Գերդ. Տ. Օշական Ծ. Վրդպ. Չօլոյանի գլխավորությամբ: Պատվիրակությանն անդամակցում էին Քուվեյթի «Ազգային վարչության» անդամներ Հակոբ Կուլումճյանը, Մեսրոպ Թազազյանը եւ այլ անձինք: Նախարարը շնորհակալություն հայտնեց հյուրերին՝ ԱԳՆ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների վարչության առած նվիրատվության համար (համակարգիչ եւ ֆաքս) եւ զրույցի ընթացքում անդրադարձավ Ծոցի երկրների հետ Հայաստանի հարաբերությունների հեռանկարներին՝ միաժամանակ ներկայացնելով Քուվեյթ-Հայաստան հարաբերությունների զարգացման ընթացքը: Կարծիքներ փոխանակվեցին քննարկված խնդիրների լուծմանը Ֆուվեյթահայ համայնքի ունենալիք մասնակցության վերաբերյալ: Զրույցի վերջում հյուրերը հույս հայտնեցին, որ Ֆուվեյթահայ համայնքն իր ավանդը կներդնի Ծոցի երկրների հետ Հայաստանի հարաբերությունների հետագա սերտացման գործում: «Ազգ»

Հոսանք

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՄԱՍԻՍԻ ԼԱՆՋԵՐԻՆ

Վերջին շրջանում հայ-թուրքական սահմանում լարվածության աճը բնակչության մեջ մտահոգություն եւ տագնաք է առաջացրել: Անշուշտ, դրան նպաստել են նաեւ մի քանի օր առաջ սահմանապահ զորքերի Արտաշատի ուղեկալի ուղղությամբ Թուրքիայի տարածքից արձակված կրակահերթերն ու թուրքական ռազմական ուղղաթիռների հետախուզական թռիչքները Հայաստանի պետական սահմանի երկայնքով: Սակայն Երեւանում որեւէ մեկը չի կարողանում կամ չի ցանկանում դրան իսկակ պատասխան տալ:

Ադրբեջանի ազգային անվտանգության գծով խորհրդականի աշխատակազմին, դարձյալ այստեղից մեզ հաղորդվեց տեղեկանալ միայն, որ եթե դրա անհրաժեշտությունը լինի, համապատասխան ծառայությունները հանդես կգան համապատասխան հայտարարություններով, իսկ ընդհանրապես լավ չէ, որ ժողովրդի մեջ նման լուրեր են տարածվում: Աշխատակազմի պատասխանատուներից մեկը խոստացավ, որ իրենց լրատվական ծառայության ղեկավարն առաջիկա ասուլիսում անդրադարձ կանդրադառնա այդ հարցին: Ցավոք, վերջինիս հետ կապվել այդպես էլ չհաջողվեց:

«Ազգ»

Տարդիկ տագնապած են, եւ պատահական չէ, որ երեկ օրվա ընթացքում խմբագրություն զանգահարեցին քաղաքացիներ՝ հայտնելով, թե վերջին օրերին քաղաքի հատկապես Հարավ-Արեւմտյան թաղամասից գիշերը պարզ կարելի է տեսնել կասկածելի լույսեր Մասիսի լանջերին: Բնակչության շրջանում չգիտես ինչ նպատակով լուրեր են տարածվում, թե այս ամենը պատահական չէ...

Փորձեցինք պարզաբանումներ ստանալ Հայաստանում տեղաբաշխված ռուսական սահմանապահ ուժերի շտաբից, սակայն շտաբի մի պատասխանատու հայտնեց, թե լիազորված չէ այդ խնդրով որեւէ հայտարարություն անել՝ միաժամանակ հրաժարվելով հաստատել կամ հերքել վերոհիշյալ լուրերը: Ինչ վերաբերում է Հայաստանի նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդականի աշխատակազմին, դարձյալ այստեղից մեզ հաղորդվեց տեղեկանալ միայն, որ եթե դրա անհրաժեշտությունը լինի, համապատասխան ծառայությունները հանդես կգան համապատասխան հայտարարություններով, իսկ ընդհանրապես լավ չէ, որ ժողովրդի մեջ

digitised by A.R.A.R.@

Միջոցառում

ՍԻՐԻԱՅԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ ԿԱ

«Երկաթե վարագույրի» վերացումից հետո Հայաստանն սկսեց տնտեսական նոր գործընկերներ փնտրել ոչ միայն հյուսիսում: Բնականաբար Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներն այդ առումով մի շարք առավելություններ ունեին: Սակայն սկզբնական շրջանում նոր տնտեսական կապերն արտահայտվում էին հիմնականում «տուրիստական առեւտրով», եւ զբոսաշրջիկության սիրահար մեր հայրենակիցները փաստորեն առդգա համագործակցության հիմքերն էին դնում՝ յուրաքանչյուրն իր չափով: Նույնիսկ նման սիրողական մակարդակով Հայաստանի եւ Սիրիայի միջեւ տարեկան մի քանի միլիոն դոլլարի առուտրաշրջանառություն էր տեղի ունենում: Ըստ որոշ տվյալների, ամսական 16-20 չարտերային թռիչքներ են կատարվում դեպի Սիրիա՝ Ռուսաստանի վրայով (Թուրքիայի օդային տարածքով անցնելը հայկական ինքնաթիռների համար մեծ բարդությունների հետ է կապված):

Թուրքիան Արաբական թերակղզու եւ ընդհանրապես արաբական աշխարհի հետ կապտ բոլոր ուղիներն անցնում են Սիրիայի վրայով, եւ հայտնի չէ, թե ինչո՞ւ Թուրքիան ղեմ է խոչընդոտի իր տարածքով տարանցիկ փոխադրումները Հայաստանից Սիրիա եւ հակառակը: Այնպես որ, եթե Սիրիան նույնքան շահագրգռված լինի հայ-սիրիական լայնածավալ համագործակցությամբ, որքան Հայաստանը (իսկ հանդիպումներն ու նախնական պայմանավորվածությունները վկայում են, որ այդպես է), ապա կարող է համաղաստանյան լծակներն օգտագործելով լուծել հաղորդակցության ուղիների հարցը: Ինչ վերաբերում է օդային ճանապարհներին, ապա թեեւ Լաթաքիայի օդանավակայաններն առայժմ ի վիճակի չեն ծանր ինքնաթիռներ ընդունել, այնուամենայնիվ, հանդիպումների ընթացքում քննարկվել է նաեւ օդանավակայանի վերակառուցման հարցը: Խոսվել է նաեւ ավտոմոբիլային հաղորդակցության մասին (Սիրիայից մարդատար ավտոմեքենաները Երեւան են հասնում 14-15 ժամում): Այդ ճանապարհի վերջին կետը Սիրիայում Քեսաբն է՝ հայկական հայտնի բնակավայրը: Ներկայումս ճանապարհի այդ հատվածում շինարարական մեծ աշխատանքներ են իրականացվում:

Թերեւս համագործակցության առավել լայն հեռանկարներ են բացում Հայաստանում էներգետիկ մեծ հզորությունների առկայությունն ու Սիրիայում դրա խիստ պակասը: Որքան էլ պարոդոքսալ է, սակայն այդ: Սաֆարյանի խոսքերով, Սիրիայում նույնպես կան էլեկտրաէներգիայի հովհարային անջատումներ: Ավելին, այնտեղ մասնավոր ձեռնարկություններին պետությունն ընդհանրապես էլեկտրաէներգիա չի տալիս, եւ վերջիններս ստիպված են օգտագործել գեներատորներ: Ուստի պատահական չէ, որ հայկական գեներատորներն այնտեղ մեծ պահանջարկ ունեն: Եւ այնուամենայնիվ, էներգետիկ համագործակցություն ասելով պետք է հասկանալ ավելի լայնածավալ ծրագիր: Համեմատության համար ասենք, որ Սիրիան Հայաստանի համեմատ ունի մի քանի անգամ ավելի շատ բնակչություն եւ մի քանի անգամ ավելի փոքր էներգետիկ հզորություններ, որոնք ստեղծելու համար անհրաժեշտ կլինեն հարյուր միլիարդավոր դոլլարներ: Ուստի արդեն ուրվագծվում են այնպիսի հեռանկարային ծրագիր, որոնցով նախատեսվում է օգտագործել Սիրիայի վառելիքն ու Հայաստանի հզորությունները: Մի խոսքով, հայ-սիրիական տնտեսական համագործակցությունն իսկապես մեծ հեռանկարներ ունի: Ինչ վերաբերում է Սիրիայի հայ համայնքի դերին, ապա որպես Տեր-Պետրոսյանի խոսքերով, համայնքը նույնիսկ երբեմն ամենից առաջ իրենց հետ չի համագործակցում, մի բան, որ մեր պետականության համար այնքան էլ ընդունելի չէ: Եւ այնուամենայնիվ, հայ համայնքի հետ հանդիպումներն անցել են խիստ ջերմ եւ հուզիչ մթնոլորտում: Ավելին՝ համագործակցության հետագա ծրագիր քննարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովում սիրիական կողմն ընդգրկել է երկու հայերի:

Կարող է այն տպավորությունն ստեղծվել, թե ահա հայկական պատվիրակությունը մեկնում է որեւէ երկիր, հանդիպումներ ունենում, համաձայնագիր ստորագրում, սակայն վերադառնալուց հետո ամեն ինչ կարծես մոռացվում է, եւ արդյունքները չեն երեւում: Այդպիսի վտանգ իսկապես կա, որովհետեւ մշակման կապի եւ ներկայացուցչությունների բացակայությունը կարող է վտանգել օպերատիվ համագործակցությունը: Սակայն մինչեւ այժմ ձեռնարկված բազմաթիվ նման հանդիպումներ եւ պայմանագրեր արդեն տալիս են իրենց պտուղները, թեեւ այս կամ այն նկատառումներով միշտ չէ, որ նպատակահարմար է այդ մասին խոսել հրապարակայնորեն: Օրինակ, տնտեսուհիները պետք է նկատած լինեն, թե ինչպես Երեւանի խանութներում շաբաթվա գինը 1500 ռուբլուց կտրուկ իջավ մինչեւ 1100-1150 ռուբլի: Պատճառն այն էր, որ Միացյալ Արաբական Էմիրություններից ցամաքային ճանապարհով Հայաստան հասցվեց մեծ քանակությամբ շաբաթավազ: Կարելի է բազմաթիվ նման օրինակներ բերել, որոնք վկայում են, թե միշտ չէ, որ համաձայնագրերն ու որոշումները մնում են թղթի վրա: Այնպես որ, մնում է սպասել արդյունքներին:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կարծիք

Համաշխարհային բանկի ներկայացուցիչները Երեւանում

Սեպտեմբերի 13-ին վարչապետ Հրանտ Բագրատյանն ընդունեց Համաշխարհային բանկի Հայաստանի ներկայացուցիչ Վահրամ Ներսիսյանցին եւ նրա հրավերով Երեւանում գտնվող Համաշխարհային բանկի Եվրոպայի եւ Միջին Ասիայի բաժնի ավագ խորհրդական Միխայիլ Միխայելիին եւ ավագ տնտեսագետ Ռիկարդո Մարտինին:

Վերջիններս նշեցին, որ նպատակ ունեն ուսումնասիրել Հայաստանի մակրոէկոնոմիկան եւ ելնելով միջազգային փորձից վերլուծական առաջարկներ տալ Հայաստանի տնտեսական կայունացման, միջոցեսական տնտեսական կապերի զարգացման վերաբերյալ: ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից հայտնեցին նաեւ, թե պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ բանկի ներկայացուցիչները շաբաթվա վերջում կներկայացնեն իրենց ուսումնասիրությունների արդյունքները եւ կծանոթացնեն նախնական եզրակացություններին:

«Ազգ»

Բժշկական հիմնարկության աշխատակիցը ձերբակալվեց թմրադեղերի վաճառքի պահին

Հի ՆԳՆ լրատվական կենտրոնից հայտնեցին, որ 3-ամսյա օպերատիվ-հետախուզական աշխատանքների շնորհիվ սեպտեմբերի 10-ին ժամը 14.00-ին ՀՀ ՆԳՆ նարկոբիզնեսի եւ թմրամոլության դեմ պայքարի վարչության աշխատակիցները ձերբակալեցին առողջապահության նախարարության ենթակայության տակ գտնվող «Դիագնոստիկա» կենտրոնի հիմնկոթունաբանության լաբորատորիայի վարիչ, գիտությունների թեկնածու Ռուբեն Եղիկյանին թմրադեղերի առքուվաճառքի պահին իր ծառայական աշխատասենյակում: Եղիկյանի մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց 81380 ռուբլի խորհրդային թղթադրամ, ստացված թմրադեղերի վաճառքից: Անձնական պահարանից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ թմրանյութեր, այդ թվում մորֆին, կոկայնար, կոդեին, նոկսիրոն, նեարկիլներ եւ թմրանյութեր պատրաստելու զանազան պարագաներ, որոնց օգնությամբ պետական հիմնարկության լաբորատորիայում պատրաստում եւ վաճառում են թմրադեղեր: Խուզարկության ընթացքում հայտնաբերվեցին նաեւ կիսասինթետիկ եւ հերոին տիպի թմրանյութեր պատրաստելու համար նախատեսված մինիլաբորատորիա:

Վերը նշված թմրանյութերը եւ դրանց հումքը, որն առգրավվեց ՆԳՆ նարկոբիզնեսի եւ թմրամոլության դեմ պայքարի վարչության կողմից, սեւ շուկայում վաճառվելու դեպքում կգնահատվեր մոտ 200 միլիոն ռուսական թղթադրամ:

ՆՏ

Էջեր

Ժամանակակից արվեստն իր ժամանակի արվեստն է

Հայաստանի Ազգային բանգարանի սրահներում վերանորոգվում են Արդի արվեստի բանգարանի առաջին ցուցանմուշները, որոնց հեղինակներն իրենց ստեղծագործությամբ հիմնադրեցին այս հաստատությունը:

1972 թ. հունիսի 13-ին բացված Խորհրդային Միությունում արդի արվեստի առաջին եւ միակ պատկերասրահն ցուցադրահանդես այժմ վերանորոգման, ցուցանմուշների տեղադրման եռուզեռի մեջ է, եւ հոկտեմբերին թերեւս Արդի արվեստի բանգարանի մասնաճյուղում կներկայացվի հայ ժամանակակից արվեստն անմիջապես:

Սակայն հայ արդի կերպարվեստի փուլանցումը եւ Ազգային բանգարանում միայն հին սերնդի հեղինակների (նրանցից ոմանք արդեն չկան) գործերի ընդգրկումը ոչ միայն խորհրդանշական է, կամ ասենք, թելադրված տարածության հնարավորություններով, այլեւ խիստ փաստական, քանի որ, ինչքան էլ այս ցուցանմուշներն Արդի արվեստի բանգարանինն են, այնուամենայնիվ, արդեն դասական դառնալու միտում ունեն («արդի արվեստի դասականներ», քննումը Հենրիկ Իգիթյանինն է) եւ ժամանակակից-արվեստը՝ ամենաժամանակակից ըմբռնմամբ, արդեն չեն կրում իրենց մեջ:

Բացման խոսքում Արդի արվեստի բանգարանի տնօրեն Հենրիկ Իգիթյանն իր երախտիքն արտահայտեց Երեւանի քաղաքային խորհրդի այն ժամանակվա նախագահ Գր. Հասրաթյանին եւ «Պրավդայում» տպագրված «Սկիզբը Սարյանն էր» հոդվածի հեղինակ Գր. Առաքելյանին, որոնք ժամանակին քիչ դեր չխաղացին մոդեռն արվեստի նկատմամբ խորհրդային բնամանքը ճեղքելով, նման բանգարան հիմնադրելու գործում:

Սակայն բազմաթիվ հյուրերի մեջ հայ ավանգարդի երիտասարդ ներկայացուցիչներից որեւէ մեկը չկար: Պրն. Իգիթյանը պատճառաբանեց, որ «նրանք մեր տղերքն են, հետո կգան, կնայեն: Ցուցադրանմուշների տեղադրման ժամանակ շատ են ելել-գնացել»: Այնուամենայնիվ, բնական է մոդեռն արվեստը կրող սերունդների ու ստեղծագործական ոճերի անխուսափելի տարանջատումը՝ անգամ հին ու նոր փուլերի ներսում:

Այնուամենայնիվ Ազգային բանգարանի ցուցասրահներում ներկայացվածը երկրորդ դարակեսի հայ կերպարվեստի լավագույն հավաքածու է. Գառզու, Մինաս, Ժանսեմ, Պզդիկյան, Չամամչյան, Հունանյան, Հակոբյան, Ռ. Էլիբեկյան, Հ. Էլիբեկյան, Կալենց, Ռ. Խաչատրյան, Բաժբեուկ-Մելիքյան, Պողոսոմոգով-Տեր-Ասվածատրյան, Պետրոսյան, Գայանե Խաչատրյան:

Ռ. Խ.

«Սպեղանին» հրավիրում է: Երեւանում են գտնվում «Անդրանիկ Հարությունյան» հիմնադրամի (Լոս Անջելես) ներկայացուցիչները, որոնք բերել են զոհված ազատամարտիկների ընտանիքների համար հանգանակած հերթական օգնությունը: «Սպեղանի» բարեգործական միության նախագահ Աստ Քերոբյանը հայտնեց, որ Հայաստանի սահմաններում եւ Արցախում զոհված հայաստանցի մարտիկների այրիները եւ ծնողները այս օրաթվա ընթացքում կարող են ստանալ իրենց հատկացված օգնությունը Գրողների միության շենքում:

ՆՏ

Հայտարարություն

ՀՀ մշակույթի նախարարության Հանրապետական մշակույթի տան լարախաղացների նորաբաց ստուդիան հայտարարում է ընդունելություն 10-12 տարեկան տղաների եւ աղջիկների:

Հասցեն՝ Մաշտոցի պողոտա, Պոլյան դպրոցի հարեւանությամբ, «Աշխատանքային ոճերով» սպորտ ընկերության շենքում: Ամեն շաբաթ-կիրակի, ժամը 11-ից 14-ը:

Մանրամասնությունների համար զանգահարել՝ 22-67-30

Հարգելի հայրենակիցներ

Ս/թ սեպտեմբերի 21-ից 25-ը ՀՀ մշակույթի նախարարությունը, Թումանյանի եւ Ալավերդու տեղական խորհուրդների գործկոմները կազմակերպում են «Թատերական Լոռի» փառատոնը, որը կանցնի Թումանյանի շրջանի շրջանային մշակույթի տան շենքում:

Փառատոնին կմասնակցեն հանրապետության լավագույն «ժողովրդական» եւ ինքնագործ թատրոնները:

Տեղեկությունների համար զանգահարել
Հեռ. 52-39-41
Կազմկոմիտե

Հարգելի հայրենակիցներ

Ս/թ սեպտեմբերի 21-ին Մատենադարանի մոտ, Թատերական հրապարակում եւ երիտասարդության պալատում ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ երիտասարդության հարցերի վարչությունը, Ազգային երիտասարդական կենտրոնը, բուհերի ուսանողական խորհուրդները նշելու են անկախության օրը:

Մատենադարանի մոտ, առավոտյան ժ. 11.00-ին Դուք հնարավորություն կունենաք տեսնել Արտակ արեային եւ Դավիթ-Բեկին իրենց ժամանակներով: Թատերականացված այս մի ցուցադրման ընթացքում կհանդիպեք երաժշտության նշանավոր գործիչների եւ խմբերի:

Այնուհետեւ ժ. 13.00-ից մինչեւ 16.00-ը Թատերական հրապարակում կանցկացվի ժողովրդական տոն՝ կինոյի, խաղարդյի, հումորի նշանավոր կատարողների եւ առանձին համույթների մասնակցությամբ: Անկախության օրվան նվիրված տոնահանդեսը ժ. 16.00-ին կսեղմի երիտասարդության պալատի մեծ դահլիճ, որ կսկսվի ուսանողական տոն ծրագիրը՝ հանրապետության բուհերի հավաքական թիմերի մասնակցությամբ:

Անկախության օրվան նվիրված տոնահանդեսի հովանավորն է «ԻՄԱԿ» հայ-իտալական համատեղ ձեռնարկությունը:

digitised by A.R.A.R.@

Քաղաքական

Ընտրության իրավունք

Տիգրան Հայրապետյանի անունը գրեթե կես տարի չի երևում Հայաստանի մամուլի էջերում: Ի՞նչ պատահեց ժամանակին աղմուկ հանած եւ հասարակական ու պետական շրջանակներում ոչ միանշանակ գնահատականի արժանացած այդ տաղանդավոր մտավորականի հետ, որ փոխնիփոխ հաջողությամբ օգտագործում էր քաղաքական մեկնաբանի, վերլուծողի հավասարակշիռ գրիչը կրքոտ հրապարակախոսի ամբիոնի հետ: Այդ մասին համենայն դեպս ինքը լռում է: Սակայն դժվար չէ ենթադրել պատճառներից եթե ոչ ամենահիմնականը, ապա գլխավորներից մեկը: Այն, ինչի մասին գրում էր հեղինակը՝ ինքնուրույն պետականության կայացման շրջանում քաղաքական ակտիվ նախաձեռնություններ, ռեֆորմացիա, տեսադաշտի ընդլայնում, բնական միջավայրի հավասարակշիռ ընտրություն, այդպես էլ չկարողացավ ծեղքել թերահավատության եւ անտարբերության այն պատնեշը, որ այդ գաղափարների առաջ դրեցին Հայաստանի ճակատագիրը վճռող քաղաքական ուժերը՝ լինեն դրանք իշխանությամբ օժտվածներ, թե այդ ճանապարհին գտնվողներ: Հեղինակը մտերիմ զրույցների ժամանակ գտնում է, թե ինքը պարտվեց, սակայն, կարծում ենք, դա անհաջող պարտություն չէ, այլ հասարակության, որ ինքնուրույն կառույցների ձեւավորմանը զուգահեռ այդպես էլ չկարողացավ մշակել ինքնուրույն մտածողություն եւ հիմնականում գերի մնաց առորյա քաղաքական պատեհապաշտությանը: Ի՞նչ նոր ասելիք ունի Տիգրան Հայրապետյանը, ներքազաստվե՞լ է նա քաղաքական այն թեթեւ ռոմանտիզմից եւ կրքոտությունից, որ հետեւանք էին նրա հախուռն բնավորության, ոչ թե երեւույթների խորը տեսնող նրա մտքի, կերեւա վաղը: Այսօրվանը համարենք փորձնական նախերգանք:

Ինչպես կանխատեսվում էր, հանրապետությունում ձմեռային ճգնաժամի հետ մեկտեղ ավարտվեց նաեւ հայկական նորաստեղծ պետականության պատմության այն փուլը, երբ նախորդային վարչակարգի կողմից առաջադրված եւ իրականացվող քաղաքականությանը կարելի էր գեթ տեսականորեն հակադրել այլընտրանքային տարբերակներ եւ հույս ունենալ, թե քաղաքական պայքարի տարբեր մեթոդներով կարելի կլինի որեւէ դրական եւ առաջադիմության հեռանկար խոստացող երանգներ մտցնել այն քաղաքական, տնտեսական եւ հասարակական հենքում, որի վրա կառուցվելու էր հայկական նոր պետականությունը: Անշուշտ, կարելի էր եւս վեց ամիս կրկնել նախկին նախազգուշացումները ու կանխատեսումները, բաց գլխակցելով, որ դա այլեւս առարդյուն է: Սակայն տաֆտալոգիան այնքան էլ անմեղ զբաղմունք չէ, բանզի կարող է վտանգել ամենախելոք գաղափարն անգամ: Եթե հասարակությունը լիակատար կամազրկություն է ցուցաբերում իր իսկ ինքնապաշտպանական մեխանիզմները գործադրելու հարցում եւ փախուստը իրականությունից գերադասում է այդ իրականությունն իր կամքին համաձայնեցնելու պայքարից, ապա երկխոսությունը նրա հետ կարելի է վերականգնել միայն այն բանից հետո, երբ որակական փոփոխություն է տեղի ունեցել, որն ի չիք է դարձնում նախկին փուլին հարմարեցված ստերեոտիպները եւ հասարակությունն ամբողջովին եւ յուրաքանչյուր անհատ առանձին վերցրած կրկին կանգնում է ընտրության անհրաժեշտության առջեւ: Ավելին, այլեւս կասկած չի հարուցում մեր այն նախկին ենթադրությունը, թե քաղաքական զարգացումները Հայաստանի եւ ԼՂՀ-ի շուրջ անմիջականորեն շոշափելու են նաեւ հայկական սփյուռքի ու նախ եւ առաջ Միջին Արեւելքի հայության կենսական շահերը, ներքաշելով նրան ռազմաքաղաքական իրադարձությունների մեջ: Ուստի, նրանք եւս ստիպված են լինելու ընտրություն կատարել:

Խոսքն, իհարկե, առաջայի ծանրության տակ կքած միջին քաղաքացու կողմից ընտրության անհրաժեշտության ինքնուրույն գիտակցման մասին չէ: Այլ այն կողմնորոշման մասին, որ կցուցաբերի միջին քաղաքացին իշխանությունների, քաղաքական ուժերի եւ լրատվության զանգվածային միջոցների կողմից նրան դարձադրվող ընտրության հարցում: Ինչպես խորհրդային համակարգից նոր իրավիճակի անցման փուլում, այժմ եւս գիտակցական ընտրության հնարավորությունն ունենալ, թե քաղաքական դաշտի զրկել ընտրության իրավունքից, երբ այդ ժողովրդի գեր որոշ հասվածն ուզում է օգտվել իր իրավունքից եւ դատապարտ է դարձնում այն: Հենց սա է, որ լինելու է միջին քաղաքացու առաջին ընտրությունը. դատապարտելո՞ւ է նա, արդյոք, հասարակամտորեն, որդեսզի ցանկացած դարագայում երկրի ապագան որոշող հիմնահարցի վերաբերյալ իրեն ընտրություն կատարելու իրավունք տվի, թե այդ հարցին կվերաբերվի ծույլ անտարբերությամբ, թողնելով հարցի որոշումը բախտի, կամ քաղաքական նոմենկլատուրային էմահաճույքին:

Բոլոր հնարավոր անակնկալներով հանդերձ սահմանադրության եւ իշխանության մարմինների նոր ընտրությունների հարցերն առավել մաչելի են եւ լուծելի, քանզի այդ ընթացքում ներգրավված են ազդեցիկ քաղաքական ուժեր, որոնք այս կամ այն ձեւով շահագրգռված են ժողովրդի աջակցությունն ստանալու խնդրում: Շատ ավելի դժվար, առայժմ գրեթե բացարձակապես անլուծելի է մնում միջին քաղաքացու ընտրության իրավունքի առաջադիմն արտաքին քաղաքականության ոլորտում եւ երկրի ներսում տնտեսության, սոցիալական աղաիովության բնագավառում, հասարակական կյանքի վերակառուցման ոլորտում: Հենց այս ուղղություններով բացարձակապես անվերահսկելի քայլերն են, որ արմատական փոփոխություններ են մտցնում երկրի եւ ժողովրդի ընդհանուր կերպարում, ձեւավորելով այն իրողությունները, որոնք պայմանավորելու են ապագա տասնամյակների քաղաքական եւ հասարակական զարգացումների էությունը: Արդեն այսօր արտաքին քաղաքականության մեջ եւ ներքին կյանքում շատ երեւույթներ անդառնալի բնույթ են կրում, որոնց հետեւանքները հնարավոր չի լինելու շտկել ոչ մի նոր սահմանադրությամբ, կամ նոր իշխանությունների հաստատմամբ:

Այս տեղաշարժերում իր կամքը դրսեւորելու ցանկությունը, կամ դրա բացակայությունը լինելու է մեր ժողովրդի երկարդ ընտրությունը: Ընդ որում այս դեպքում ժողովրդի կարծիքի դրսեւորման որեւէ մեխանիզմ չի ձեւավորվել եւ քաղաքական ուժերից ոչ մեկն առանձնապես շահագրգռված չէ, որ այն ձեւավորվի: Ուստի ժողովրդի այն հասվածը, որի համար միեւնույն չէ, թե ինչ հետանկար է պատրաստվում իր եւ իր սերունդների համար, ստիպված է լինելու ինքնուրույն ուղիներ որոնել սեփական դիրքորոշումը դրսեւորելու եւ այն քաղաքականությունը որոշող շրջանակներին լսելի դարձնելու համար: Համենայն դեպս, վերջին իրադարձությունները ԼՂՀ-ի շուրջ ցույց տվեցին այդողիսի ուղիների բացակայությունը, բանզի դժվար է հավատալ, թե ժողովուրդն անտարբեր է երկիրը լայնածավալ պատերազմի մեջ ներքաշելու իրական սպառնալիքի հանդեպ:

Բնականաբար, ժողովրդի ընտրությունը հիմնականում պայմանավորված է լինելու՝ քաղաքական պայքարին մասնակցող կողմերի արտահայտած տեսակետների նկատմամբ նրա վստահության աստիճանով: Քարոզչական պայքարի արդյունավետությունն է որոշելու՝ ինչպես կկողմնորոշվի ժողովուրդը ընտրության հարցում, կամ ընդհանրապես կցանկանա՞, արդյոք, օգտվել ընտրության իր իրավունքից: Կարեւորն այժմ քաղաքական զարգացումների նոր փուլի հիմնական խնդիրներն առավելագույն մաչելի ձեւով ժողովրդին մատուցելն է, եւ եթե պատմությունը նրան նոր ընտրության հնարավորություն է տալիս, ապա թող այդ ընտրությունը կատարվի ոչ թե ճակատագրապաշտության ճնշող, ազդեցությամբ, այլ իրողությունների իմացությամբ եւ գիտակցման մոտեցմամբ:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Չիլլեր մայրիկը» նույնպե՞ս սպառնում է Հայաստանին

Ավարտվեց Թուրքիայի վարչապետ տիկին Թանսու Չիլլերի այցը Մոսկվա: Դա սովորական եւ նույնիսկ կարելի է ասել՝ հարթեցված այց էր: Ամենաասովորն այն է, որ ի տարբերություն 1993 թ. Ռուսաստանի ղեկավարների հետ անցկացված բարձր մակարդակի մյուս պաշտոնական հանդիպումների, Մոսկվայում Թուրքիայի վարչապետի բանակցությունների մանրամասնությունները լայնորեն չեն հրապարակվում: Ռուսաստանի ղեկավարներն ի՞նչ գերգաղտնի բան են քննարկել տիկին Չիլլերի հետ: Փորձենք բացել որոշ փակագծեր:

Անկարայի մտահոգությունն այսօր կամ երեկ չի սկսվել: Թուրքիան անհանգիստ վիճակում է ամբողջ 1993 թվականին: Այնպես պատահեց, որ «բոլոր դիվանագիտական ճակատներում» նրա ճանապարհը փակում էր հենց Ռուսաստանը: Վերհիշենք, որ թուրքերի ազդեցությամբ ԱՄՆ-ի վարչակազմի ղեկավար Բիլ Քլինթոնը փորձեց իր եվրոպացի գործընկերներին ստիպել պատերազմ հայտարարելու նախ Հարավսլավիային, ապա միայն Սերբիային եւ ի վերջո միայն բոսնիացի սերբերին: Դա չհաջողվեց: Ռուսաստանը դեմ էր: Իսկ նրանից հետո նաեւ ԱՄՆ-ի եվրոպացի դաշնակիցները կասկածեցին: արժե՞ արդյոք իրենց երիտասարդներին ուղարկել մեռնելու հանուն բոսնիացի մահմեդականների եւ առավել եւս հանուն Թուրքիայի շահերի ու հեղինակության:

Անկարային պակաս մտահոգություն չէր պատճառում նաեւ աշխարհաքաղաքական խաղերի գծով կրտսեր գործընկեր Ադրբեջանի Հանրապետությունը: Ղարաբաղի հայերի դեմ կռվելուց հրաժարվելու կաղակցությամբ, ինչպես նաեւ հասարակության կյանքի բոլոր ոլորտների թուրքացման քաղաքականության պատճառով ոչ թուրքերեն բնակչության հուզումները, Ղարաբաղի ճակատներում կրած անհաջողությունները, որոնք ավարտվեցին Քելբաջարի ամրացված շրջանի անկմամբ, սք. մայիսին Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի խիստ պատասխանները Թուրքիային ռուսական սպառազինությունների վաճառքի համաձայնագրի կնքման ժամանակ այս ամենը լուրջ հանգամանքներ էին թուրք պետական գործիչների մտահոգության համար:

Ամռան սկսվելուց հետո Անկարայի հոգսերը չնվազեցին: Բալկաններում դաշնակից մահմեդականները վերջնականապես տանուլ տվեցին պատերազմը, այժմ արդեն ոչ միայն տեղացի սերբերին, այլեւ կաթոլիկ խորվաթներին, որոնց հետ հաստատել էին պատակցվել նույն 1993 թ.: Կովկասում Թուրքիայի դաշնակիցը՝ էլչիբեյական Ադրբեջանը զինվորական հեղաշրջում ապրեց, որի հետեւանքով լիովին փոխվեց Բաքվի թուրքամետ վարչակազմը: Բացի դրանից, Ադրբեջանի ազգային բանակը շարունակում է նահանջել ղարաբաղյան գրեթե բոլոր ռազմաճակատներում, որն սպառնալիք ստեղծեց ինչպես Անդրկովկասի աշխարհաքաղաքական իրադրության համար (անկասկած, երկար ժամանակ այն միանգամայն բարենպաստ էր Թուրքիայի եւ համաթուրքական ուժերի համար), այնպես էլ Անկարայի որոշակի տնտեսական շահերի համար: Աղդամը, Ֆիզուլին, Ջեբրայիլը, Կուբաթլին՝ Ղաշային Ղարաբաղի այս բոլոր շրջանները կամ գտնվում են Միջին Ասիայից ու Ադրբեջանից դեպի Թուրքիա ռազմավարական նավթամուղների ու գազամուղների ճանապարհին, կամ էլ նախատեսված ուղեգծերից ոչ հեռու:

Բացի դրանից, հարկ է հիշեցնել, որ Թուրքիայի անհանգստությունն էլ ավելի աճեց Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի Հունաստան կատարած պաշտոնական այցից հետո, որը թուրքերը տարբեր մակարդակներով կենցաղայինից մինչեւ պաշտոնական շրջանակները, ընկալեցին գրեթե որպես Բալկաններում ռուսական նախկին կայսերական արտաքին քաղաքական կուրսի վերածնում, ինչը հավանաբար ենթադրել էր տալիս Մոսկվայի առանձնահատուկ կանխատրամադրվածությունը դեպի Թուրքիայի հարեւան ուղղափառ ժողովուրդները:

Թուրքիան սկսեց ագրեսիվություն դրսեւորել, սակայն հին ավանդույթի համաձայն, եթե ուզում ես հարեւանիդ վախեցնել, սկզբում նրան վնաս պատճառիր փոքր բաներում, ասենք, «հաշիվ մարիր» նրա կրտսեր եղբոր կամ թույլ բարեկամի հետ: Եւ Անկարան որպես պատրվակ օգտագործելով Նախիջեւանում Ադրբեջանի Ռեսպուբլիկայի տարածքի զրկել ընտրության իրավունքից, երբ այդ ժողովրդի գեր որոշ հասվածն ուզում է օգտվել իր իրավունքից եւ պատրաստ է դատապարտել այն: Հենց սա է, որ լինելու է միջին քաղաքացու առաջին ընտրությունը. դատանջելո՞ւ է նա, արդյոք, հասարակամտորեն, որպեսզի ցանկացած դարագայում երկրի ապագան որոշող հիմնահարցի վերաբերյալ իրեն ընտրություն կատարելու իրավունք տվի, թե այդ հարցին կվերաբերվի ծույլ անտարբերությամբ, թողնելով հարցի որոշումը բախտի, կամ քաղաքական նոմենկլատուրային էմահաճույքին:

Բոլոր հնարավոր անակնկալներով հանդերձ սահմանադրության եւ իշխանության մարմինների նոր ընտրությունների հարցերն առավել մաչելի են եւ լուծելի, քանզի այդ ընթացքում ներգրավված են ազդեցիկ քաղաքական ուժեր, որոնք այս կամ այն ձեւով շահագրգռված են ժողովրդի աջակցությունն ստանալու խնդրում: Շատ ավելի դժվար, առայժմ գրեթե բացարձակապես անլուծելի է մնում միջին քաղաքացու ընտրության իրավունքի առաջադիմն արտաքին քաղաքականության ոլորտում եւ երկրի ներսում տնտեսության, սոցիալական աղաիովության բնագավառում, հասարակական կյանքի վերակառուցման ոլորտում: Հենց այս ուղղություններով բացարձակապես անվերահսկելի քայլերն են, որ արմատական փոփոխություններ են մտցնում երկրի եւ ժողովրդի ընդհանուր կերպարում, ձեւավորելով այն իրողությունները, որոնք պայմանավորելու են ապագա տասնամյակների քաղաքական եւ հասարակական զարգացումների էությունը: Արդեն այսօր արտաքին քաղաքականության մեջ եւ ներքին կյանքում շատ երեւույթներ անդառնալի բնույթ են կրում, որոնց հետեւանքները հնարավոր չի լինելու շտկել ոչ մի նոր սահմանադրությամբ, կամ նոր իշխանությունների հաստատմամբ:

Ադրբեջանի պետական սահմանի իր խախտման վերաբերյալ եղած լրատվական հաղորդումները, տարբեր սադրանքների է դիմում... թուրք-հայկական սահմանում, քանի որ Հայաստանին համարում է Ռուսաստանի եւ Իրանի կրտսեր գործընկերը. ըստ որում Անկարայում չգիտես ինչու արդեն չեն կասկածում, որ Մոսկվան ու Թեհրանը գործում են համատեղ եւ միասնական ծրագրով:

Այո, էլչիբեյի վարչակազմն արդեն չես վերադարձնի: Հետեւաբար, մնում է միայն երեւանի վրա ճնշման գործադրմամբ Ռուսաստանին ստիպել դադարեցնելու հակաթուրքական ռազմավարական ծրագրերի իրականացումը: Եւ այնուամենայնիվ, ամեն ինչ վերջնականապես պարզելու համար Թանսու Չիլլերը հարթորեն մեկնեց Մոսկվա. նա նույնիսկ ջանաց իր այցը հարմարեցնել Արբեջանի հին ու նոր ղեկավար Հեյդար Ալիեւի վաղուց հայտարարված այցին: Մենք դեռ չէինք հասցրել մանրակրկիտ ուսումնասիրել Ռուսաստանի ղեկավարության հետ վերջինիս բանակցությունների արդյունքները, երբ հաղորդում ստացվեց այն մասին, թե սեպտեմբերի 8-ին Մոսկվայում նախատեսված ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի պատվիրակությունների հանդիպումը հետաձգվել է: Ակնհայտ դարձավ, որ միջնորդի՝ Ռուսաստանի պնդմամբ երկու կողմերն ստիպված եղան սպասել Ռուսաստանի ու Թուրքիայի բանակցությունների ավարտին: Որպեսզի հասկանանք, թե թուրքերը ինչ մեծ կարեւորություն էին տալիս այդ բանակցություններին, պետք է նկատի ունենանք, որ նույնիսկ Ելցինի Ա-թենք կատարած այցից հետո Թուրքիայի պաշտոնական շրջանակներում խոսում էին Ռուսաստանի նախագահի Անկարա այցելելու ցանկալիության մասին. իբր Հունաստանի եւ Թուրքիայի դիրքերի «հավասարակշռման» համար: Ուստի Չիլլերի ներկա այցը ոչ թե սովորական, այլ արտակարգ իրադարձություն է:

Բանակցությունները ավարտված են: Բայց դրանց արդյունքները վերջին հաշվով հայտնի չեն: Սակայն Մոսկվայի մամուլի ասուլիսում Թանսու Չիլլերի ելույթի ոճից ու բովանդակությունից կարելի է ենթադրություն անել, որ Թուրքիայի պատվիրակությունը չի հասել իր գլխավոր նպատակին, այն է Ռուսաստանին համոզել չխանգարելու Միջին Ասիայի եւ Ադրբեջանի նավթի ու գազի հանքավայրերի յուրացմանը, ինչպես նաեւ Ադրբեջանի տարածով կամ ծայրահեղ դեպքում Վրաստանով նավթամուղի ու գազամուղի անցկացմանը: Ուղղակի ասենք, որ նույնիսկ Մոսկվայում Չիլլերի այցն սկսվելուց առաջ թուրքերը եւ նրանց թիկունքին կանգնած ուժերը բանակցությունների հաջող արդյունքի անչափ փոքր հնարավորություններ ունեին: Ռուսաստանցի ռազմագետները բազմաթիվ գործողությունը նրա համար չէին սկսել, որ նահանջեին Վրաստանի եւ Ադրբեջանի իրադարձություններից հետո: Ուստի մենք մինչեւ օրս այդպես էլ չգիտենք, թե, օրինակ, կայացե՞լ է արդյոք Մոսկվայում Ալիեւի հետ նախատեսված Չիլլերի հանդիպումը. Բաքվի ռադիոն «Սեխտեր» («Առավոտ») ծրագրում պնդեց, թե հանդիպումը տեղի է ունեցել, նկարագրեց դրա բոլոր մանրամասնությունները, իսկ Ռուսաստանի «Իզվեստիա» լրատվական ծրագիրը սեպտեմբերի 12-ին հայտարարեց, թե հանդիպումը չի կայացել...

Ուստի թուրքերը շարունակում են սադրանքները թուրք-հայկական սահմանում, չնայած Ռուսաստանի զինվորական եւ դիվանագիտական շրջանակների նախազգուշացումներին. հենց սեպտեմբերի 12-ին թուրքական ռազմական ուղղաթիռը Հայաստանի Արմավիրի շրջանի գոտու 50 կիլոմետրանոց հատվածում շրջաթռիչք կատարեց հետախուզական նպատակներով:

Բայց թվում է, թե Թուրքիան ծայրահեղ քայլի չի դիմի: Ռազմական գործողություններին մասնակցելը այդ երկրի համար կարող է նշանակել երկու տարվա ընթացքում եվրոպական միավորման լիիրավ անդամ դառնալու նրա հույսերի խորտակում. հենց դա էր գլխավոր խնդիրներից մեկը համարում տիկին Չիլլերը, խոսելով իր կաբինետի ծրագրերի մասին: Բացի դրանից, Թուրքիայի բոլոր խնդիրներին այժմ ավելացել է եւս մեկը. եթե չհաջողվի «վերադարձնել» Ադրբեջանին, ապա պետք է ծգտել գոնե վերստանալ այն ֆինանսական միջոցները, որոնք արեւմտյան ընկերությունները հասցրել են ներդնել այդ երկրում: Օգոստոսին Ադրբեջանում ԱՄՆ դեսպան պարոն Ռիչարդ Մայլզը հայտարարեց, որ այդ երկրում ԱՄՆ շահերը կազմում են հետեւյալ դրույթները. 1) Ղարաբաղի պատերազմի ավարտ, 2) Այդ երկրում ժողովրդավարության եւ անձի ազատությունների զարգացում, 3) Ամերիկացի ներդնողների շահերի պաշտպանություն:

Եթե պարոն դեսպանը երրորդ եւ առաջին դրույթների տեղերը փոխեր, անկեղծ եւ ավելի մոտիկ կլիներ ԱՄՆ իրական շահագրգռություններին ինչպես Ադրբեջանում, այնպես էլ բովանդակ աշխարհում...

Իսկ Թուրքիան ըստ մեր ենթադրության կարող է վերածվել «թույնի ազդեցությունը կորցրած օձի». անկախ Անկարայի ցանկությունից, եթե Ադրբեջանը սեպտեմբերի վերջերին դառնա ՄԴՀ անդամ, ապա այլեւս ոչ մի ՆԱՏՕ, եվրոպական միավորում եւ ոչ մի ՄԱԿ չեն կարողանա գործուն կերպով միջամտել Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը: Ամեն ինչ կլինի այնպես, ինչպես պատկերացնում է Կրեմլի նոր ղեկավարությունը...

ՍԵՐԳԵՅ ՇԱՔԱՐՅԱՆՑ

digitised by A.R.A.R.@

Գործողում

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԿԱՌՈՒՅՈՒՄ Է ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

Ճանապարհները ցանկացած պետության արյունատար անոթներն են, որոնք մեծապես որոշում են պետության բարեկեցությունը: Հայաստանի ճանապարհներն այսօր ամենևին էլ բավարար վիճակում չեն և պետության առանձնահատուկ ուշադրության կարիք ունեն: Առավել բարեկարգ՝ Երևան-Սևան մայրուղին, որի միջոցով էր Հայաստանը կապվում արտաքին աշխարհի հետ, այսօր հասկանալի պատճառներով չունի այդ դերը: Առավել բանուկ և նշանակություն ունեցող ճանապարհը Զանգեզուրը հատող ճանապարհն է դարձել՝ դեպի Ստեփանակերտ և Մեղրի՝ կապվելով Իրանի հետ: Ճանապարհը կարևորագույնս ստրատեգիական նշանակություն ունի հանրապետության համար, փաստորեն այն միակն է այսօր, որ Հայաստանը կապում է արտաքին աշխարհի հետ:

Իսկ այն այնքան էլ հուսալի չէ՝ տեղ-տեղ վտանգավոր կտրուկ շրջադարձեր, տեղ-տեղ՝ ձնահոսքերի պատճառով: Ահա այդ վտանգավոր տեղամասերի նորոգումն իր վրա է վերցրել «Հայաստան» համահայկական հիմնադրամը:

Սեպտեմբերի 9-ին հիմնադրամի նախաձեռնությամբ Հայաստանի լրատվական միջոցների ներկայացուցիչները գլխավորությամբ հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուշակ Պետրոսյանի, հիմնադրամի լրատվական ծառայության պետ Տիգրան Պասկևիչյանի և շինարարության բաժնի ինժեներ Հարություն Ավագյանի շրջագայության մեկնեցինք Զանգեզուր և Լեռնային Ղարաբաղ, ծանոթանալու և լուսաբանելու այն աշխատանքները, որոնց ֆինանսավորումն իրականացնում է «Հայաստան» հիմնադրամը:

Տեղեկանք. «Հայաստան» համահայկական հիմնադրամը ստեղծվել է համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի 1992 թ. մարտի 3-ի հրամանագրի: Հոգաբարձությունների խորհուրդն ունի 24 անդամ, որից 13-ը սփյուռքի հասարակական-քաղաքական և բարեգործական կազմակերպությունների անդամ են, ազգային-մշակութային գործիչներ: Հիմնադրամը հաշիվներ ունի, բացի Հայաստանի Ազգային բանկից, տարբեր երկրների՝ ԱՄՆ-ի, Հոլանդիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի բանկերում:

Գործադիր վարչության տնօրենն է Մանուշակ Պետրոսյանը: Նրա խոսքերով, հիմնադրամը հանդես է գալիս հիմնականում պատվիրատուի դերում: Բոլոր ծրագրերն ու առաջարկները, որոնք ներկայացվում են հիմնադրամ, այդ թվում կառավարության կողմից, մանրամասն փորձագիտական ուսումնասիրության են ենթարկվում: Հիմնադրամն իր ներկայացուցիչներն ունի Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում և Աղետի գոտում:

Մեր ճանապարհորդության առաջին հանգրվանը Վայքի շրջանն էր, մասնավորապես Վայք-Սարավան շրջանցիկ ճանապարհը, որը թույլ կտա մեծացնել տեղամասի թողունակությունը, մեղմացնել ոլորանները և պաշտպանել անվտանգությունը ձնահոսքերից: Բացի դրանից, մայրուղու երկայնքով կատարվում են ձնահոսքից պաշտպանական աշխատանքներ, որոնք իրականացնում է Եղեգնաձորի ճանապարհների շինարարության և շահագործման ձեռնարկությունը (տնօրեն Ատոմ Խալաթյան): Եվ ձեռնարկության տնօրենը, և աշխատակիցները բարձր գնահատեցին պատվիրատուի հիմնադրամի արդյունավետ օգնությունը, որը ոչ միայն ֆինանսավորում է շինարարությունը, այլև լուծում վառելանյութի հարցը:

Ինչպես ճշտեց պրն. Խալաթյանը, բոլոր այդ աշխատանքների համար տրամադրվել է մոտ 400 մլն. ռուբլի, որից իրացվել է մոտ 100-ը: Շինարարությունը պետք է ավարտին հասցվի մինչև ձմեռ:

Հիմնադրամի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որտեղ այն բազմաթիվ ծրագրեր ունի: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ճանապարհներին և ավերված բնակավայրերի վերականգնմանը: Ինչպես հայտնի է, Ղարաբաղը ներքին ճանապարհներ կամ չուներ, կամ էլ եղածները անմխիթար վիճակում են: Շատ ուղիներ գցվել են հաղթող, անհրաժեշտությունից դրդված, որոնք հաճախ աներբեւեկելի են դառնում անձրեւներից ու ձյունից: Այժմ աշխատանքներ են տարվում մասնավորապես երկու շրջաններում՝ Ասկերանում և Մարտունիում: Առաջինը Ստեփանակերտ-Մարտակերտ մայրուղու հատվածն է՝ Սեյդիշեն-Կիչան: Աշխատանքներն ընթանում են Ասկերանի շրջանի սահմանագլխին: Առայժմ կատարվում են հողային աշխատանքներ: Ֆինանսական խնդիրներ չկան, նշեց ԼՂՀ շինարարության պետական վարչության պետ Ռոլես Աղաջանյանը, որն ուղեկցում էր մեր խմբին, միակ խնդիրը վառելիքն է: Հողային աշխատանքներն արդեն ավարտված կլինեին, եթե վառելիքի հարցը չլիներ: Իսկ շինարարությունն անհրաժեշտ է ավարտել մինչեւ ձմեռ, որովհետեւ անձրեւներից ու ձյունից այն անանցանելի է դառնում: Իսկ հիմնական ճանապարհն անցնում է Աղդամով:

Գրեթե նույնն է վիճակը նաեւ Մարտունու շրջանում, Ասկերանի շրջանի Հարավ գյուղից մինչեւ Մարտունու հյուսիսային մասում գտնվող Մյուրիշեն, Ավդուռ, Հացի, Նորշեն, Բերդաշեն բնակավայրերն ընկած հատվածում: Այնուամենայնիվ, ինչպես հավաստիացրին պրն. Աղաջանյանը եւ «Աշոտ Երկաթ» պետական շինարարական ձեռնարկության տնօրեն Գարիկ Սաֆարյանը, իրենք ամեն ինչ կանեն աշխատանքները ժամանակին ավարտելու համար:

Ինչպես վերեւում նշվեց, հիմնադրամը ֆինանսավորում է նաեւ ավերված բնակավայրերի վերականգնումը: Մասնավորապես Ստեփանակերտում ընթացքի մեջ է յոթ ավերված շենքերի վերանորոգումը եւ բնակելի, եւ պետական հատատությունների: Դրանցից բժշկական ուսումնարանի հանրակացարանի շենքում արդեն ավարտվել է ավերված մասի վերականգնումը եւ կատարվում են ներքին հարդարման աշխատանքներ:

Այնուհետեւ ԼՂՀ Նախարարների խորհրդի շենքում տեղի ունեցավ յուրօրինակ բրիֆինգ, մասնակցությամբ ԼՂՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բորիս Առուշանյանի: Նա համառոտ ներկայացրեց այն ծրագրերն ու կատարված աշխատանքները, որոնք իրականացվում են հիմնադրամի միջոցներով: Առայսօր, նրա խոսքերով, այդ ծրագրերի համար «Հայաստան» հիմնադրամը տրամադրել է մոտ 1 մլրդ. ռուբլի, որը հատկացվել է հետեւյալ նպատակների համար. ներքին ճանապարհների կառուցում եւ բարեկարգում, վառելիքի հայթայթում, էներգետիկա, ջրատարներ, կապի համակարգի վերականգնում: Գոյություն ունի էներգետիկ ճգնաժամի հաղթահարման կոնկրետ ծրագիր. կառուցվելու է Ստեփանակերտ-Շուշի-Կարմիր Շուկա էլեկտրագիծը, որը թույլ կտա բարելավել մանավանդ Մարտունու եւ Հադրութի շրջանների էլեկտրամատակարարումը: Պետք է կառուցվի նաեւ Բալլուջա-Ստեփանակերտ ջրատարը, որով լուծվի ԼՂՀ մայրաքաղաքի ջրամատակարարման հարցը:

Պրն. Առուշանյանի խոսքերով, իրենք ունեն նաեւ ներքին դաշտարներ ու հնարավորություններ, որոնցից ԼՂՀ տնտեսության հատկացվող միջոցները մոտավորապես հավասար են հիմնադրամի կատարած ներդրումներին: Դրանք կարող էին ավելի լինել, սակայն պատերազմը եւ զինված ուժերի մատակարարումը ահռելի ծախսեր են պահանջում: Պրն. Առուշանյանը ավելացրեց նաեւ, որ խիստ հսկողություն է սահմանված հիմնադրամի ներդրած միջոցների նկատմամբ (այն մասնավորապես իրականացնում է Ղարաբաղում հիմնադրամի ներկայացուցիչ Նախրա Պետրոսյանը, որը զբաղվում է նաեւ կատարված աշխատանքների տվյալների համակարգմամբ):

Այս ճանապարհորդությունը, կարելի է ասել, «Հայաստան» հիմնադրամի յուրատեսակ հաշվետվությունն էր հայկական մամուլի ներկայացուցիչների առաջ, սեպտեմբերի 17-ին Երեւանում կայանալիք հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստից առաջ: Այն օգտակար էր երկուսով՝ փոխադարձ ինչ-ինչ անվստահությունն ու կասկածությունը հաղթահարելու առումով, եւ այդ համագործակցությունն այսուհետեւ կշարունակվի եւ ավելի կսերտանա, հավաստիացրին «Հայաստան» հիմնադրամի պատասխանատուները:

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑՅԱՆ
Ստեփանակերտ-Երեւան

Շուկա

Արտասահմանյան ծխախոտի բիզնեսին վտանգ չի սպառնում Հայաստանում

Այսօր արտասահմանյան ծխախոտն այնպես է ներխուժել մեր իրականություն, հատատվել մեր շուկայում, որ դժվար է արդեն պատկերացնել, թե ի՞նչ կկատարվի, եթե հանկարծ ու ճմահաճույքով շարժվող գրչի մի հարվածով արգելվի դրա վաճառքն ու օգտագործումը:

Եվ այսպես, ի՞նչ է ասում աղյուսակը: Եթե մինչ Ռուսաստանի Կենտրոնական դրամատան հայտնի ակցիան արտասահմանյան ծխախոտի գները երեւանյան շուկայում փոփոխվում էին համեմատաբար սահուն կերպով, արժեթղթերի ինդեքսի աճին զուգահեռ ու համապատասխան, եւ գների ամսական փոփոխությունը հազվադեպ էր գերազանցում 15-20 տոկոսի մակարդակը, ապա ակցիայից հետո միջին հաշվով ունեցանք գրեթե 62 տոկոսի աճ:

Հատկանշական է, որ թեկուզեւ մյուսների համեմատ աննշան տարբերությամբ, բայց առավելագույն փոփոխությունը (62,5 տոկոս) կրեցին մեր պայմանական դասակարգման մեջ քանկարժեք սիգարետները: Փաստ, որը խոսում է այն մասին, որ նման սիգարետների շուկայում կա արտաքին ֆինանսական ազդակների ավելի սակավ ենթակա պահանջարկ: Պարզեցնենք. եթե մեր դասակարգմամբ էժան սիգարետներից «Քենթոնի» գնի փոփոխությունը միջին հաշվով կազմել է 30,1 տոկոս, ապա «Մալբորոյինը» երկու անգամ ավել (64,3), ասել է, թե վերջինիս, պահանջարկը նույնքան կայուն է առաջինից:

Մեր դասակարգման մեջ էժանագիներ խումբը դիտարկելիս կարելի է տեսնել մի քանի ուշագրավ փաստ. մեկը, որ արտասահմանյան ծխախոտի հայաստանյան շուկայում իր դիրքերն է ամրացնում չինական արտադրանքը (100,5 տոկոսի աճ), որի պահանջարկի աճը թերեւս հարկ է կապել առավելապես, եթե ոչ բացառապես, համեմատաբար էժան տեղականին մոտ գնի հետ: Մյուսը, որ «Ասպորը» հավակնում է փոխել իր խումբը, այդ մասին է վկայում գնի 87 տոկոս փոփոխությունը:

Երկրորդ խումբը դիտարկելիս կարելի է հետեւություններ անել «Մագնայի» եւ «ԷԼԷՄ-ի» պահանջարկի նվազման եւ խմբից դուրս երեքի պահանջարկի ավելացման մասին: Հատկապես ընդգծվում են «Հոլիվուդը» եւ «Պրեզիդենտը» (ամերիկյան արտադրության):

Երրորդ խմբում, ինչպես եւ նախկինում, առաջնությունը «Մալբորոյինն» ու «Քենթինն» է: Սրանց հետեւում են «Փալ Մալն» ու «Քամելը» (առավելապես «սուպեր» տեսակները): Ըստ ամենաբարձր տեղեկությունների, իրադրությունը փոփոխվել է ի օգուտ «Ռոթմանսի», որն ընդհուպ մոտեցել է «առաջատարին»:

Պատկերի հորիզոնական դիտարկումներից եթե անցնելու լինենք ուղղահայացին, ապա հարկ է նշել, որ գների առավելագույն թռիչք է եղել մայրաքաղաքի էրեբունի զանգվածում, այնուհետեւ կենտրոնում, իսկ մնացած տեղերում գրեթե հավասար՝ միչ ավել 50 տոկոսից:

Մնում է ավելացնել, որ մեր դիտարկումները գալիս են եւս մեկ անգամ հաստատելու այն իրողությունը, որ երեւանը (Հայաստանը) եղել ու մնում է նախկին ԽՍՀՄ-ում իբրեւ ավանդական «ծխող» շրջան, եւ արտասահմանյան ծխախոտի բիզնեսն այստեղ ամենակայուն եւ երաշխավորված եկամուտ ապահովողներից է:

Անտարակույս ադրանքի վերջնարժեքի վրա էական հավելում է օդային տրանսպորտի ծախսը, քանզի այս ծխախոտի հիմնական զանգվածը հանրապետություն է մուտք գործում ավիատրանսպորտով Ռուսաստանից: Հուսալ, որ մեր շուկայում մրցակցությունը կտա ցանկալի արդյունք՝ կնվազի գինը կամ գոնե կդադարի աճել, կարելի կլինի միայն բեռնափոխադրումների եւ այլընտրական ճանապարհների ի հայտ գալուց հետո, հատկապես կոմերցիոն բեռնափոխադրումների:

Իհարկե, առջեւում դեռ կունենանք ծխախոտի եւս մեկ թռիչք, կապված ակնկալվող այս անգամ արդեն հայաստանյան դրամափոխանակության հետ:

Սակայն մինչ այդ էլ, հին ռուբլիների մուտքը հանրապետություն եւ շարժն այստեղ, պետք է ենթադրել առանց երեւելի ցատկերի կշարունակեն բարձրացնել գները:

Իհարկե, չի բացառվում նաեւ գների որոշակի կայունացում, եթե Ռուսաստանի նախաձեռնած վերջին քայլերը՝ ուղղված ռուբլու էլ ավելի կայունացմանը (Ռուսաստանում տարադրամի շրջանառությունն արգելելու մտադրությունը) տա իր դրական արդյունքը:

Սակայն ոչ մի բարենպաստ ֆինանսական քամի, ոչ մի համաձայնեցված քաղաքականություն չի կարող փոխհատուցել հսկայական ճանապարհածախսը՝ օդային տրանսպորտի ծառայության գինը, ուրեմն, երբեք Ռուսաստանից Հայաստան առաքվող արտասահմանյան ծխախոտի գինը մեզանում չի կարող լինել ավելի ցածր կամ հավասար այնտեղի գնին: Իսկ մշտական պահանջարկի առկայությունը, եւ ծխախոտի բանակի ու տեսականու ընդարձակումը թույլ են տալիս խոսել աճելու հնարավորություն ունեցող պահանջարկի մասին: Այստեղից էլ հետեւություն՝ երեւելի հեռանկարում արտասահմանյան սիգարետների բիզնեսին Հայաստանում ոչ մի վտանգ չի սպառնում:

ՄԱՐԳԱՐ ՄԵՆԵՋՅԱՆ

Արտասահմանյան ծխախոտի գնի փոփոխությունը Երեւանում

Ծխախոտի անվանումը	Գները մինչեւ դրամի փոխվելը/փոխվելուց հետո						յուրաքանչյուրի փոփոխությունը %-ով	խմբում փոփոխությունը միջին հաշվով %-ով
	Ն.Նորքի զանգվ	Ջեյրուն	Էրեբունի	Կենտրոն	Հ. Արեւմ. զանգվ.	Շենգավիթի շրջ		
1-ին խումբ (հարաբերական էժան)								
Քենթոն	300/350	200/300	250/400	250/300	300/350	200/330	+30,1	
Ջինս	220/320	220/300	250/400	300/320	300/350	330/350	+29	+61,8
Սաուբ	180/300	150/250	200/300	160/260	250/350	200/300	+53,8	
Ասպոր	230/400	150/300	200/500	180/350	250/400	200/350	+87	
Չինական	170/320	150/300	150/300	120/280	200/350	150/300	+100,5	
2-րդ խումբ (հարաբերական միջին)								
Մագնա	450/600	400/600	350/550	350/500	500/700	380/550	+43,3	
Հոլիվուդ	400/600	400/600	250/550	300/500	450/750	350/550	+72,6	+61,1
էլէմ	600/800	550/700	300/550	500/700	600/800	550/750	+42	
Փիր	350/600	350/550	250/550	250/500	350/550	300/550	+70,8	
Պրեզիդենտ	350/650	350/550	250/500	250/400	500/650	300/450	+72,8	
3-րդ խումբ (հարաբերական թանկ)								
Մալբորո	1000/1400	850/1100	500/1300	800/1200	900/1500	850/1200	+64,3	
Քենտ	900/1500	550/100	850/1200	700/1300	900/1500	750/1300	+68,6	
Ռոթմանս	1100/1400	800/1200	700/1300	800/1200	900/1500	850/1200	+55,3	+62,6
Քամել	900/1400	800/1200	650/1000	700/1200	900/1500	750/1200	+59,1	
Փալ Մալ	700/1100	650/1000	600/1000	500/900	900/1300	550/950	+65	
գնի փոփոխ. ըստ շրջանների միջին հաշվով %-ով	53,6	53,6	87,3	65,6	53,3	57,6	-	61,8

digitised by A.R.A.R.@

Քաղաքականություն

ԲՈՍՆԻԱՅԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԸ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Բոսնիայում տեղի ունեցող իրադարձությունները իրենց վրա են բերել ողջ աշխարհի ուշադրությունը, քանի որ այստեղ մշակվող սահմանների եւ պետությունների ստեղծման սկզբունքներին եւ դրանց իրագործման մեխանիզմներին «աշխարհ կերտողները» ցանկանում են տալ համաաղարտիկ բնույթ: Երբ հաջողվի այստեղ գծել այնպիսի քարտեզ, որը կընդունեն կամ ստիպված կլինեն ընդունել կողմերը, առա հետագայում այս նույն «քարտեզագրական հաստոցը» կօգտագործվի նախկին ԽՍՀՄ տարածքում եւ աշխարհի մյուս բեժ կետերում: Բոսնիայի այս բաժանումը հակասում է պետությունների ստեղծման բնականոն ընթացքին եւ օրենքներին, նրա առաջացումը չեն ստեղծվի բնական սահմաններով տնտեսական կենսունակ միավորներ, սակայն այն համաադասխանում է հակամարտ կողմերի եւ ողջ Եվրոպայի խաղաղության մեծ ցանկությանը: Հենց այդ է պատճառը, որ չնայած ստեղծվող նոր երկրներն անվանվում են «մինի պետություններ» կամ նույնիսկ նահանգներ, դասադասվում են Մեծ Խորվաթիայի եւ Մեծ Սերբիայի մասին խոսակցությունները, հուզիչ անկեղծությամբ հիշվում «սահմանների անփոփոխության» սկզբունքը, այնուամենայնիվ պետք է բաղաքագետ լինել կամ խիստ պարզամիտ, հավատալու համար Բոսնիայի միասնականության գաղափարին կամ այնտեղ ստեղծվելիք իրավիճակը խաղաղություն կոչելու:

Առաջարկված վերջին «խաղաղության նախագծով» սերբերը պետք է իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքների որոշ մասը զիջեին մուսուլմաններին, չնչին տարածքներ՝ խորվաթներին: Պետք է հաստատվեր զինադադար, որին կհետեւեր մեծ քանակությամբ մարդասիրական օգնություն եւ «էթնիկական զտումներից» տուժածների վերադարձը տուն: Ադագան բավականին լուսավոր էր թվում, մանավանդ որ ըստ ՄԱԿ-ի միջնորդ Թորվալդ Ստոլտենբերգի, քարտեզը գծել են հենց հակամարտ կողմերը: Այս առաջարկին պետք է պատասխանել «այո» կամ «ոչ»: Խորվաթները ու սերբերն ասացին «այո»: Իսկ մուսուլմանները, որոնց արվում էին ամենաշատ զիջումները, չասացին «ոչ», այլ սկսեցին նոր պահանջներ ներկայացնել: Միակ բանը, որ նրանք ասացին այս ծրագրի օգտին, այն էր, թե «սա ավելի լավ է, քան ոչինչը»: Սակայն հենց այդ «ոչնչից» խուսափելու համար էլ բոսնիական մուսուլմանների ղեկավար Ալիա Իզեթբեկովիչը պատահաջեց տարածք Ադրիատիկ ծովի դուրս գալու համար եւ ավելի շատ հող հյուսիսարեւմտյան հատվածում: Սակայն խորվաթները կտրուկ մերժեցին զիջել Նեում ծովափնյա գյուղաքաղաքը, որը նախկին Բոսնիայի եւ Հերցեգովինայի Սոցիալիստական Հանրապետության միակ ծովափնյա բնակավայրն էր եւ որը շատ մեծ վերադասումով կարելի էր կոչել նավահանգիստ: Ըստ էության, այս ծրագիրը մեծ տարածքներ է թողնում էթնիկական մաքրում իրագործողներին:



Քարտեզը ՍՊՍԿ-ի

Ինչպես պետք է մուսուլմաններն ի վիճակի լինեն վերահսկել Գորաժդե-Ժեոպա ճանապարհը կամ ՄԱԿ-ի զորքերի դուրս գալուց հետո ինչպիսին է լինելու հյուսիսարեւմտյան հատվածը հիմնական տարածքին միացնող ճանապարհի կամ դեռի Ադրիատիկի Պլոժե նավահանգիստ «երաշխավորված ելքի» վիճակը: Կամ ինչ կպատահի այն մարդկանց հետ, որոնք չեն ցանկանա ապրել «մաքուր» սերբական, խորվաթական կամ մուսուլմանական հատվածներում: Չնայած մեկուկես տարվա պատերազմին, Բոսնիան մնում է ազգային տարասեռ երկիր, մինչդեռ այս նախագիծը ենթադրում է բնակչության զանգվածային տեղահանություններ: Այս բնակիչներին տրվող երաշխիքները անիրագործելի են, քանի որ կողմերն ի սկզբանե ձգտում են համասեռ տարածքների ստեղծման:

Ի վերջո մուսուլմանները հույս ունեին այս համաձայնությունների հետեւանքով առնվազն ունենալ մի երկիր, որն ի վիճակի կլիներ տնտեսապես գոյատեւել: Այսպիսի բաժանումն այդ նպատակը դարձնում է անհասանելի. Խորվաթական եւ սերբական տարածքներով բաժանված եւ խոցելի միջանցքներով միացած երկիրն առանց հազարավոր կաղույտ տաղարտավորների չի կարող որեւէ առեւտրական կապ իրականացնել:

Իսկ Ժնեւյան համաձայնագրերի ի՞նչ այլընտրանք կա: «Դա բավարար ծրագիր չէ: Այն հեռու է իդեալական լինելուց», ասում է միջազգային միջնորդ լորդ Դեյվիդ Օուենը, «բայց, ազնիվ խոսք, ես չգիտեմ ավելի լավ լուծում, եւ խորապես կասկածում եմ, թե ուրիշները գիտեն: Իրականությունն է թելադրում լուծումը: Դա խաղաղության հասատում է դժոխքում»:

Պատրաստեց
ԱՂԱՍԻ ԵՆՈՔՅԱՆԸ

Ակնարկ

Թուրքիան վերազինվում է

Թուրքիան, որը նորացնում է իր զինված ուժերը, համաադասխանեցնելով դրանք իր փոփոխվող շրջանային դերին, այս շաբաթ հյուրընկալում է ռազմական տեխնիկայի մի ցուցահանդես, որտեղ կներկայացվեն մոտավորապես 200 ռազմաղյունաբերական ընկերություններ:

22 երկրների, այդ թվում՝ նախկին խորհրդային 6 հանրապետությունների միջազգային զինավաճառները, զինվորական բարձրատիճան պաշտոնյաները կմասնակցեն երեկ Անկարայում բացված միջազգային պաշտպանական արդյունաբերության եւ քաղաքացիական ավիացիայի տոնավաճառին, որը կտեւի 5 օր: «Այս տոնավաճառը կազմակերպելու պատճառներից մեկը հաջորդ տասնամյակում Թուրքիայի բանակի սպառազինության նորացումն է», հայտնեց Թուրքիայի զինված ուժերի հիմնադրամի ղեկավար, ցուցահանդեսի կազմակերպիչ գեներալ Գուրհան Քաֆերը: Մասնակցող 196 ֆիրմաներից 45-ը Միացյալ Նահանգներից են, 26-ը՝ Մեծ Բրիտանիայից, 15-ական՝ Ֆրանսիայից եւ Գերմանիայից, մյուսները՝ Իսպանիայից, Շվեյցարիայից, Իտալիայից: Կցուցադրվեն նաեւ 36 թուրքական ընկերություններ, որոնք ներկայացնում են ամենատարբեր արդյունաբերություն՝ սկսած ահեղ F-16 իմքնաթիռից մինչեւ զրահամեքենաներ, որոնք արտադրվել են թուրք-ամերիկյան համատեղ ձեռնարկություններում: Պաշտպանության նախարար Նեզաթ Այազը դեռ մարտ ամսին հայտնել էր, որ Թուրքիան այս տարի լրացուցիչ 2.5 մլրդ. դոլար է տրամադրել նոր ծրագրերին, 1985 թվականից ավելացնելով պաշտպանության ծախսերը 10.5 միլիարդով: ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան ձգտում է ունենալ ավելի մեծ հնարավորություններով պրոֆեսիոնալ բանակ, որպեսզի ի վիճակի լինի արագ արձագանքելու տարբեր հնարավոր սպառնալիքների, որոնք կարող են առաջանալ հարեւան Կովկասում, Բալկաններում կամ Մերձավոր Արեւելքում տիրող անկայունություններից: Այազը նշել է, որ կառավարությունն արդեն 300 միլիոն դոլար է տրամադրել ԱՄՆ-ից KNOX տիպի 8 արագընթաց հածանավ գնելու համար: Թուրքական նավատորմը պետք է գնի նաեւ 4 ծովային ուղղաթիռներ: Ռազմական արդյունաբերության ենթակառուցվածքը (SSM) այժմ բանակցություններ է վարում ֆրանս-գերմանական համատեղ եվրոկոպտեր ձեռնարկության հետ Սուպերպումա տիպի 20 ուղղաթիռ գնելու մասին: Դեկտեմբերին Թուրքիան ամերիկյան Սիկորսկի ընկերության հետ 1.1 միլիարդանոց համաձայնագիր է կնքել Բլաք Հոուք «սեւ բազե» տիպի 95 ուղղաթիռ գնելու եւ համատեղ արտադրելու վերաբերյալ: Ասելասն ընկերությունը, որտեղ իր բահաբաժինն ունի պաշտպանության նախարարությունը, գիշերային տեսողության ջերմային սարքերի համատեղ արտադրության պայմանագիր է ստորագրել ադրիլին Տեխաս Ինսթրումենթս ամերիկյան ձեռնարկության հետ: SSM-ը այժմ պատվիրել է ցածր բարձրության թռիչքից պաշտպանության համակարգեր:

Վերազինվում են F-4 եւ F-5 օդանավերը: Նախատեսվում են օդում լիցքավորող իմքնաթիռների եւ բազմալիցք հրթիռակիրների պատվերներ: SSM-ը մտածում է նաեւ ականորս նավերի եւ 35 մմ հակաօդային համակարգի ձեռք բերման մասին: Անցյալ տարի SSM-ը 1.7 միլիարդ դոլար արժողությամբ F-16 իմքնաթիռների 80 շարժիչ է գնել Ջեներալ Էլեքթրիքսից եւ 2 աջակցող հետախուզական օդանավ՝ Ջեներալ Ատոմիքսից եւ AAT-ից, ինչպես նաեւ ձեռքի եւ աշտարակային գնդացիրների տեխնոլոգիա՝ ֆրանսիական GIAT-ից: ■

Բարի

Կառլո Չամպի. Իտալիան շուտ դուրս կգա ճգնաժամից

Իտալիայի Նախարարների խորհրդի նախագահ Կառլո Ազեգլիո Չամպին լավատեսությամբ է նայում առաջիկա եւ գտնում է, որ իր երկիրն առաջիններից մեկը դուրս կգա Արեւմուտքը համակած ճգնաժամից: Այդ մասին նա հայտարարեց Իտալիայի հարավում՝ Բարի քաղաքում խոշոր տնավաճառի բացման ժամանակ:

Չամպին նշեց, որ իր կառավարության ընդունած ֆինանսական օրենքը, որը սահմանում է երկրի եկող տարվա զարգացման հիմնական ուղղությունները, մեկնարկել է առանց քաղաքական կուսակցությունների մասնակցության: «Կուսակցությունների ղեկավարները դրա մասին իմացան թերթերից», ասաց Իտալիայի կառավարության ղեկավարը, դրանով իսկ ընդգծելով իր կաբինետի «վերկուսակցական եւ տեխնոկրատական» բնույթը: Վերջին ամիսներին երկրի փաստորեն բոլոր քաղաքական կուսակցությունները ներքաշվել են կաբառոների հետ կապված խոշոր խայտառակ պատմության մեջ եւ կորցրել ընտրողների վստահությունը:

Իտալիայի կառավարության ղեկավարի խոսքերով, «խիստ խնայողության» քաղաքականությունը միակ եղանակն է, որ կարող է երկիրը դուրս բերել ճգնաժամից: Այդ կուրսի շրջանակներում կաբինետը որոշում է ընդունել կրճատելու բուժապասարկման, սոցիալական ապահովության, այդ թվում կենսաթոշակների պետական ծախսերը: Այդ եւ մյուս համանման միջոցառումների հաշվին կառավարությունը հույս ունի տնտեսել ընդհանուր առմամբ ավելի քան 30 հազար միլիարդ լիրա:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԲԻԶՆԵՍ-ՏԱՍՍ

Միտք

Ֆրանսիայի տնտեսական զարգացման կանխատեսումներ

Ֆրանսիայի ներկայիս տնտեսական անկման ժամանակաշրջանը պետք է ավարտվի ընթացիկ տարվա 4-րդ եռամսյակում, գտնում են լրատվության եւ տնտեսական կանխատեսումների բյուրոյի՝ երկրի հիմնական կոնյունկտուրային հաստատություններից մեկի փորձագետները: Գործարար ակտիվության աճխուժացում կնկատվի 1994 թ. առաջին եռամսյակում, հանգեցնելով արտադրանքային արտահայտությամբ երկրի համախառն արտադրանքի 0.8 տոկոս աճի, մինչդեռ 1993 թ. սպասվում է դրա ծավալի 1.5 տոկոս կրճատում:

Ֆրանսիայի խոշորագույն բանկերից մեկը՝ «Էնդոսյուեզը» ավելի հոռետես է իր կանխատեսումներում, քանի որ եկող տարի կանխատեսում է արդրանքային համախառն արտադրանքի 1 տոկոս աճ եւ գործարար ակտիվության զգալի աճխուժացում 2-րդ եռամսյակում (տարեկան մակարդակի հաշվարկով՝ 2 տոկոս): Ընդհանուր արդրանքային արտադրանքը, որը ներառում է նաեւ պետական ու մասնավոր հիմնարկների գործունեության արդյունքները, բանկի կանխատեսումների համաձայն, 1994 թ. կավելանա 1 տոկոսով:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԲԻԶՆԵՍ-ՏԱՍՍ

Լուրերի Հոսք

Դուդաեւը կանխատեսում է Ռուսաստանի փլուզումը

Երկուշաբթի օրը տեղի ունեցած հարցազրույցում Ինգուշիայի փոխնախագահ Բորիս Ագաթովը հայտարարել է, որ «Ինգուշիան հանդես է գալիս ՌԴ սուբյեկտների՝ Ռուսաստանի ղեկավարության հետ այնպիսի հարաբերությունների կազմավորման օգտին, որ ժողովուրդների ճակատագիրը կախված չլինի նրանից, թե ով է ղեկավարում երկիրը: Հենց այդ պատճառով էլ հանրապետության նախագահին առաջարկվել է ՌԴ հետ հարաբերությունների հարցով հանրաքվե կազմակերպել»: Ագաթովի կարծիքով, Ռուսաստանի կազմից դուրս գալը միայն ծայրահեղ տարբերակն է, քանի որ դեռ հույսեր կան, որ կենտրոնական ղեկավարությունը քայլեր կձեռնարկի Պրիգորոդնոյե շրջանի 64 հազար ինգուշ փախստականներին եւ վերադարձնելու ուղղությամբ: Իսկ Չեչնիայի նախագահ Դուդաեւի կարծիքով, ՌԴ կազմից Ինգուշիայի դուրս գալու հետեւանքը կլինի Ինգուշիայի եւ Չեչնիայի լրիվ շրջափակումը, իսկ այնուհետեւ՝ մեկուսացումը: Հարցազրույցի ժամանակ նա ասաց, որ դրան կհետեւի Ռուսաստանի փլուզումը, որը կսկսվի Դաղստանից, չնայած նրան, որ ՌԴ ղեկավարությունն այդ գործընթացը կանգնեցնելու նպատակով կուժեղացնի ճնշումը հյուսիսկովկասյան հանրապետությունների վրա: Այնուհետեւ, Դուդաեւի կարծիքով, այդ հանրապետությունները կմիավորվեն մի միասնական հյուսիսկովկասյան քաղաքական եւ տնտեսական տարածքի մեջ: ԻՖ

Վրաստանի խորհրդարանը քննարկում է արտակարգ դրության հարցը

Օրերս Վրաստանի խորհրդարանում ծեւավորված մեծամասնությունը (224 անդամից 130-ը) երկուշաբթի օրը հավանություն է տվել էդուարդ Շեւարդնաձեի առաջարկությանը՝ նախնականորեն 2-3 ամսով արտակարգ դրություն մտցնելու մասին: Այս հարցը Վրաստանի ղեկավարը երեկ պատասխանատու դրեց խորհրդարանի առաջ: Նա հայտնեց, որ արտակարգ դրություն հայտարարելուց հետո պետք է որոշվեն զվիադական խմբավորումների զինաթափման ժամկետները: Հակառակ դեպքում պետք է դրվի նրանց վերացման հարցը: Շեւարդնաձեն նշել է, որ արտակարգ դրությունը ներառում է նաեւ պետական օբյեկտների, խճուղիների եւ երկաթուղիների, կամուրջների, կայարանների պահպանության հարցերը: Իսկ կիրակի օրը Քութաիսում նա հայտարարել էր, որ արտակարգ դրություն մտցնելուց հետո կսահմանափակվի քաղաքական գործունեությունը, մասնավորապես կարգելվեն ցույցերն ու միտինգները, զանգվածային տեղեկատվության միջոցներում կմտցվի «սահմանափակ» գրաքննություն: ԻՖ

Վտանգը չի բացառված, բայց իրավիճակը կարգավորվում է

Նոր մեծածավալ հարձակումների վտանգը տաջիկ-աֆղանական սահմանում ընդհանության զինված խմբավորումների եւ մոջահեդների ուժերով դեռեւս չի բացառված, համարում է ռուսական սահմանապահ զորքերի հրամանատար Անդրեյ Նիկոլաեւը: Երկուշաբթի, սեպտեմբերի 13-ին ԻՖ-ի հետ հարցազրույցում նա հայտարարել է, որ մինչեւ այսօր հնարավոր է եղել խուսափել մեծածավալ ռազմական գործողություններից Ռուսաստանի եւ կենտրոնական ասիական երկրների համաձայնեցված քաղաքականության, ինչպես նաեւ Տաջիկստանի ուժային համակարգի ամրապնդման շնորհիվ: Մինչդեռ Տաջիկստանի ազգային անվտանգության նախարարությունը, անվտանգության նախարարի տեղակալ գնդապետ Իլհոմ Ռահմատովի խոսքերով, տեղյակ է այն ամենից, ինչ կատարվում է հանրապետությունում, եւ ըստ այդ տվյալների, իրավիճակը հետզհետե կարգավորվում է: ԻՖ

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Հրդեհի պատճառները դեռեւս անհայտ են

Այսօր դեռ վաղ է խոսել Տաջիկստանում Ռուսաստանի զորքերի պահեստներում սեպտեմբերի 9-10-ին ծագած հրդեհի պատճառների մասին: Այդ մասին երեքշաբթի, սեպտեմբերի 14-ին հայտնել է Տաջիկստանի զինվորական դատախազ Իգոր Կորժենեւսկին: Նրա խոսքերով, 201 ռուսական դիվիզիայի հրամանատարությունը պնդում է, որ Դուշանբեից 25 կմ հարավարեւելք գտնվող զինամթերքի պահեստները գնդակոծվել են մի խումբ անհայտ անձանց կողմից: Մինչ այդ Տաջիկստանի կառավարության բարձրաստիճան պատասխանատուները հերքել են տաջիկական ընդդիմության հնարավոր մասնակցության փաստն այդ հրդեհի կազմակերպմանը: Կորժենեւսկին հավաստիացրել է, որ ճշմարտությունն անցկացվելու է ամենակարճ ժամկետներում եւ փորձառու մասնագետների օգնությամբ: ԻՏ

Չեռնոմիրդինն անհայտ խորհրդակցություն է անցկացրել

Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը երեքշաբթի, սեպտեմբերի 14-ին խորհրդակցություն է անցկացրել իր տեղակալների հետ: Քննարկվել են կառավարության օպերատիվ աշխատանքի հարցեր: Մանրամասնությունները հայտնի չեն: Նախորդ օրը վարչապետը հանդիպել էր Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին: ԻՏ

Ռուս պատգամավորները զինվում են

ՌԴ մոտավորապես 300 ժողպատգամավորների անուններ կան գազային ատրճանակներ ձեռք բերել ցանկացողների ցուցակներում: Ինչպես հայտնի է դարձել ԻՏ-ին, ԳԽ պատվերը կատարված է, եւ պատգամավորներն այժմ կարող են գնել այդ զենքը: «Զենքի մասին» օրենքի համաձայն, Ռուսաստանի քաղաքացիները նման զենք ձեռք բերելու իրավունք ունեն: ԻՏ

Ուկրաինան 3 տարում «կուտի» նավատորմը

Նոր տիպի ռուբլու գոտու վերաբերյալ պնտեսական սահմանագրի ստորագրման առիթով կայացած մամլո ասուլիսին Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսանդր Շոխինը հայտարարել է. «Ես չեմ հավատում, որ Ուկրաինան ի վիճակի է ինքնուրույն դուրս գալ տնտեսական ճգնաժամից, այդ պատճառով նրա ղեկավարությունից պետք է սպասել ԱՊՀ երկրների հետ տնտեսական ինտեգրացիայի խորացմանն ուղղված քայլերի: Ուկրաինան Ռուսաստանին պարտք է 3 տրիլիոն ռուբլի, այն դեռեւս, երբ տուրով այդ երկրները պետք է անցնեն միջազգային գներով առեւտրի: Մինչդեռ Սեւծովյան նավատորմը նախնականորեն գնահատվում է 30 տրիլիոն ռուբլի, որն Ուկրաինային կհերիքի միայն 3 տարի: ՆՏ

Ելցինի վարչության նոր նախագահը

Երկուշաբթի օրը Բորիս Ելցինը Նիկոլայ Մեդվեդեւին նշանակել է տարածքների հետ աշխատանքի, տեղերում նախագահի ներկայացուցիչների, ՌԴ ԳԽ հետ կապի ՌԴ նախագահի աշխատակազմի վարչության նախագահ: Նախկինում այդ պաշտոնը զբաղեցնող Գենադի Վերեսենիկովը նշանակվել է Մոսկվայի մարզի նախագահի ներկայացուցիչ: ԻՏ

Ալմա Աթայում կրկին բացվեցին ուկաները

Ալմա Աթայում խոլերայի տարածման կապակցությամբ առայժմ արտակարգ դրություն չի հայտարարվել, իսկ երեքշաբթի, սեպտեմբերի 14-ին քաղաքի սանիտարիայի ղեկավարության թույլտվությամբ Ղազախստանի մայրաքաղաքի բոլոր ուկաները նորից սկսել են աշխատել: Արգելված է միայն փողոցային առեւտուրը: Միեւնույն ժամանակ սեպտեմբերի 13-ից հայտարարված կարանտինն ուժի մեջ է: Թեեւ մանկապարտեզները եւ մյուս նախադպրոցական հաստատությունները գործում են, դպրոցներում մինչեւ սեպտեմբերի 17-ը դասադադարներ չեն անցկացվելու: ԻՏ

Մեկնաբան

Վարդուհի Վարդերեսյան. Անապատ տաղանդ եւ մտահոգություն

Վերջերս Հայաստանի գրողների տանը կայացած ստեղծագործական երեկոյին իր գեղարվեստական նոր ծրագիրը ներկայացրեց Վարդուհի Վարդերեսյանը: Իմանալով, որ վաղը հյուրախաղերով նա մեկնում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որոշեցինք հանդիպել դերասանուհուն:

Ծնվել է Ռումինիայում, ունեցել անուրախ մանկություն: Սովորել է Բուխարեստի հայկական ծխական դպրոցում՝ ի շարս այլոց աշակերտելով նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին: Այս պարագան դերասանուհին մտաբերում է առանձնակի հղարտությամբ: 1946-ին ներգաղթեց հայրենիք, սկզբում Նուբարաշեն, առյա՝ Գյումրի: Այսօրվա պես հիշում է այն պարզ չթե զգեստը, որով հայտնվեց տեղի թատրոնի դերասանական ստուդիայում: Այստեղ անցկացրած տասնամյակը դերասանուհին համարում է ամենաարգասավոր ու երջանիկ տարիներն իր ստեղծագործական կյանքում: Այս ընթացքում նա կերտեց տասնյակ կերպարներ՝ բազմաժավալ ու տարաբնույթ: Դերից դեր թռչահայտվեցին նրա տաղանդի հատկանիշները, ընդլայնվեցին նրա դերասանական ընդգրկման շրջանակները՝ կատակերգականից (Կ. Գոլդոնի-Միրանդոլինա) մինչեւ խորունկ դրամատիկականն ու ողբերգականը (Շիրվանզադեի «Պատվի համարում» Մարգարիտ, Լարիսա՝ Ա. Օստրովսկու «Անօժիտը» պիեսում, Շեքսպիրի Դեզդեմոնան եւ այլն):

Ինչ կերպար էլ անձնավորեր Վարդուհի Վարդերեսյանը, այն երեւան էր հանում բնությունից լիաբուռն օժտված այս դերասանուհու կերպարային բացառիկ զգացողությունը եւ վերամարմնավորման արվեստը: Ժամանակի պարբերականները լեցուն են դրվատանքի ու հիացմունքի բազում խոսքերով: Կերպարանափոխության ցայտուն օրինակ էր Ֆերու Ալվինգի դերակատարումը Իբսենի «Ուրվականներ» դրամայի հեռուստատեսային բեմադրության մեջ: Ներկայացման առաջին դրվագներում տակավին հրապուրիչ այդ կինն իր ոդու անխուսափելի կործանման գիտակցությունից ներկայացման վարտին ներկայանում էր որպես զառամ մի խլյակ: Եւ դրան դերասանուհին հասնում էր առանց դիմահարդարանքի օգնության: Նույնը եւ Մարիամի դերը «Մոր սիրտը» կինոնկարում: Մի ողջ տառապալից կյանք կինոդերասանի վրա՝ մանկամարդ տարիքից մինչեւ խոր ծերություն, որ խաղում է հազիվ երեսունին մոտ արվեստագիտուհին:

Նրա համակրելի դիմագծերը, արծաթահունչ ձայնը, վարպետ խաղը եւ էլի ուրիշ հատկանիշներ անմոռանալի են դարձնում խաղացած 100-ից ավելի դերերից յուրաքանչյուրը: Անջնջելի է մնում հանդիսատեսի հիշողության մեջ, օրինակ Մարգարիտի («Պատվի համար») վերջին հայացքը ինքնասպան լինելուց առաջ: Վարդուհի Վարդերեսյանի արվեստն իր վերընթաց ճանապարհին հասավ այնպիսի բարձրագույն դրսեւորման, որի դիմաց զմայլանքով կանգնեցին նույնիսկ թատրոնի շատ բան տեսած այրերը: Ջոնիի կերպարն էր դա Վիլյամ Սարոյանի «իմ սիրտը լեռներում է» թատերախաղի ածեմյանական բեմադրության մեջ: Պարույր Սեւակն այս կատակերգությամբ գրեց. «Վարդերեսյան-Ջոնին համակ լույս է, մի դայծառություն, որ անդրադառնում է հանդիսատեսի հոգում: Դերասանուհին այնպես է վերամարմնավորվել Ջոնիի մեջ, որ հետ չէ երեւակայել մեկ ուրիշ Ջոնիի»: Իսկ Փափազյանը՝ իր կյանքում շատ մեծ դերասանուհիներ տեսած արվեստագետը, գնահատանքի հետեւյալ խոսքը հանձնեց թղթին. «Այն վերջին խոսքը, որ հերոինակը դրել է փոքրիկ Ջոնիի շուրթերին եւ որով փակում է նա թատերագրությունը մի դժնդակ հարցական նշանով՝ «Թվում է, թե ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է», անքառամ դպակը կմնա Վարդուհու ճակատին եւ նրա աղագա արտիստական զարգացման անխարդախ գրավականը»:

Վարդերեսյանը ստեղծեց հայ ազգային թատրոնին դեմք ու դիմագիծ տվող կերպարների մի ամբողջական պատկերաշար՝ հանդիսատեսին պարգեւելով թատրոնի երբեմնի դասական հմայքը: Դժվար է պատկերացնել, թե դերասանուհին հինգ հարյուր անգամ բեմ բարձրանալով դերասանական ելույթներ ունենալ, գնահատանքի հետեւյալ խոսքը հանձնեց թղթին. «Այն վերջին խոսքը, որ հերոինակը դրել է փոքրիկ Ջոնիի շուրթերին եւ որով փակում է նա թատերագրությունը մի դժնդակ հարցական նշանով՝ «Թվում է, թե ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է», անքառամ դպակը կմնա Վարդուհու ճակատին եւ նրա աղագա արտիստական զարգացման անխարդախ միեւնույն դերով (Արույակ՝ Գ. Հարությունյանի «Հարսնացուն հյուսիսից»)՝ ինչպես է կարողանում դահիճանել առաջին ներկայացման բարությունը եւ գրավչությունը:

Արեւմտահայ ընտանիքի զավակ լինելով՝ դերասանուհին անթերի տիրապետում է արեւմտահայերենի արտասանական նրբերանգներին: Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի, Շահան Շահնուրի եւ արեւմտահայ այլ հեղինակների գործերի բեմական եւ հեռուստաներկայացումների ժամանակ արեւմտահայերենը նրա շուրթերից հնչում է առանձնահատուկ թովչանքով եւ դասական ճոխությամբ:

Շատ կերպարներ է ստեղծել դերասանուհին: Սակայն դրանց թիվն ավելի մեծ կլիներ, եթե նրա ստեղծագործական մատյանը չունենար չափից ավելի սղիտակ էջեր: Մտահոգ է դերասանուհին իր ստեղծագործական տեսական «գործազրկությամբ», Սունդուկյանի անվան թատրոնի վիճակով, ընդհանրապես մեր այսօրվա կյանքում արվեստի զբաղեցրած տեղով ու դերով:

Մի քանի տարի առաջ, երբ հայամերիկյան երաժշտաթատերական միության հրավերով Վարդուհի Վարդերեսյանը եղավ Լոս Անջելեսում՝ տեղի «Վարդան Աճեմյան» թատերախմբի հետ ներկայացնելու ամերիկյան թատերագիր Ջոն Պատրիկի «Տարօրինակ միսիս Սեւիչ» տրագիկոմեդիան, «Նոր օր» թերթն այսպես գրեց՝ նրա ոչ սովորական խաղի մասին. «Մենք, որ չենք տեսած Սիրանույշի խաղարկությունը, այլ կկարդանք անոր առասպելական տաղանդին մասին, տարիներետ մեր զավակներուն կրնանք ըսել, թե տեսած ենք Վարդուհի Վարդերեսյանը տիկին Սեւիչի կերպարով: Ան մեր ազգային դասական թատրոնի նոր Սիրանույշն է»:

ԼԵՎՈՆ ԼԱՇԻՆՅԱՆ

ԱԶԳ-ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ ՊԱՏԺՎՈՒՄ ԵՆ

Մեր ֆուտբոլում շարունակվում են ծեծկռտուքները, այլանդակ արարքները, հաշվեհարդարները: Արդեն գործը հասել է նրան, որ մի դեպքում մրցավարն է սպանված լինում խաղը կիսաս թողնել, մյուս դեպքում մարզիչն է թիմին հանում դաշտից:

Ֆուտբոլի հանրաքեսական ֆեդերացիայի կարգապահական կոմիտեն, երեւում է, միշտ էլ հոգսաշատ է: Առաջին անգամ ներկա գտնվելով նրա աշխատանքներին հաճելիորեն զարմացած էի նրա անհանդուրժողական կեցվածքով: Բայց հետաքրքիր է, որ իրենց հերթին խաղադաշտի «հերոսները», ինչպես օրենք, ֆուտբոլային դատարանին ներկայանում են լրիվ կերպարանափոխված եւ խղճահարության հասնող ու անմեղ մարդու տպավորություն թողնող կեցվածքով: Տարօրինակն, իհարկե, այդ չէ, այլ նրանց մարզիչների ու մյուս ղեկավարների ամենն գնով արդարանալու փորձերը՝ ու հանցանք թույլ տված ֆուտբոլիստներին պաշտպանելու հորինված ու վարպետ հնարքները:

Շատերն ուշադրությամբ մեղանչում են, խնդրում ներել, պատճառաբանելով իբր, եթե այս, կամ այն ֆուտբոլիստը բացակայի, ապա թիմը կփլվի եւ չի կարողանա շարունակել իր ելույթները: Բայց ու՞մ են պետք այնպիսի ֆուտբոլիստներ, կամ նույնիսկ թիմեր, որոնք հաճախակի ոտնահարելով տարրական չափանիշները, խաղում են մեր ֆուտբոլային պատվի հեն:

Հանդիպումների ընթացքում աջ ու ձախ հայհոյելն արդեն սովորական երեւույթ է դարձել, բայց ցավոք, մրցավարները ոչ միշտ են արձագանքում դրան. ավելի ճիշտ, արձագանքում են, երբ միայն իրենց շահերին են կպնում: Այդպես էր նաեւ երկու առաջատարների ՀՄԸՄ-ի ու «Արարատ» մրցավեճի ժամանակ: Քառահարկ հայհոյանքները նույնիսկ ուղղվում էին հանդիսականներին եւ պարզորոշ լսվում էին շուրջբոլորը: Եւ դա չէր կարող չմթագնել այդ դիտարժան հանդիպման ընդհանուր տպավորությունը: Իսկ չէ՞ որ խաղը վարում էին ՖԻՖԱ-ի մեր 3 մրցավարները: Մեկի անպատիժ լինելն, անկասկած, զայրացնում է մյուսներին: Պայքարը պետք է լինի ընդհանուր, առանց բացառության եւ առանց հաշվի առնելու, թե ով է դիմացինը:

Եթե Եվրոպայի ուժեղագույն ակումբը՝ Մարսելի «Օլիմպիկը» զրկվում է մրցաշարից, ապա մեզ մոտ էլ մեղավորները խստագույնս պետք է պատժվեն, այլապես կարգուկանոն չի հաստատվի ֆուտբոլային մեր տնտեսությունում:

Ինչպես հայտնի է, Արարատում տեղի ունեցած «Ցեմենս»-«Կոտայք» հանդիպման ավարտին դեռ 18 րոպե մնացած, երբ հյուրընկալողները խաղը շահում էին 2-0 հաշվով, հյուրերի գլխավոր մարզիչ Նազար Պետրոսյանի հրահանգով «Կոտայքը» լքեց խաղադաշտը: Նազար Պետրոսյանը մեր ամենակարգապահ ֆուտբոլիստներից մեկն էր, հիմա էլ օրենքի սիրող մարզիչ է: Ուրեմն արտաքին ինչ-որ բան էր պատահել:

- Երբ մրցավարը սկզբում դեղին քարտ ցույց տվեց մեր կարգապահ ֆուտբոլիստներից մեկին՝ Արմեն Ադամյանին, որը երբեք զգուշացում չի ստացել, ապա հեռացրեց խաղադաշտից, կրքերը ծայրաստիճան բորբոքվեցին: Խաղը կոպիտ ընթացք ստացավ, եւ լուրջ վնասվածքներ բացառված չէին: Մեր թիմը դարձել էր անկառավարելի, բացի այդ ամենը, մի նոր զգուշացում, կամ հեռացում կարող էր հետագայում շատ բանկ նստել «Կոտայքի» վրա, որը ծանր կացության մեջ է եւ պայքարում է բարձրագույն խմբում տեղը պահպանելու համար: Ես հրավիրեցի թիմի ավագ Սեմյոն Բեգլարյանին եւ հարցրեցի, արդյոք կարո՞ղ են հավասարակշռված խաղալ ու երբ զգացի, որ նյարդերը գերլարված են, գիտակցաբար հարվածը վերցնելով ինձ վրա, որոշեցի թիմը հանել դաշտից: Գիտեի, որ ես սխալ եմ գործում, բայց այլ ելք չկար: Այդպիսի պայքարունակությամբ խաղալ այլեւս հնարավոր չէր: Եթե հիմա էլ իրավիճակը կրկնվեր, նույն կերպ կվարվեի: Միակը, որ տանջում է ինձ, դա այն է, որ հուսախաբ արեցինք հանդիսականներին: Օգտվելով առիթից, ներողություն եմ խնդրում Արարատ քաղաքի եւ շրջանի մարզասերներից, ասաց Նազար Պետրոսյանը:

- Արմեն Ադամյանը հայհոյել է ՀՖ ֆուտբոլի ֆեդերացիային: Բացի այդ, խաղից հետո Բագրատ Պետրոսյանը («Կոտայք»), որը դեղին քարտ էր ստացել, հանդերձարանի ճանապարհին հարվածել է ինձ, որի համար զեկուցագիր եմ ներկայացրել տեղի միլիցիայի բաժին, ավելացրեց հանդիպման գլխավոր մրցավար Սլավա Ղազարյանը:

Կարգապահական կոմիտեն որոշեց.

1. Խաղի հաշիվը չեղյալ համարել եւ 3-0 հաշվով հաղթանակ շնորհել «Ցեմենտին»:

2. Արմեն Ադամյանին զրկել 5 խաղով, պայմանական մինչեւ մրցաշրջանի վերջը եւ տուգանել 10 հազար ռուբլով:

3. Բագրատ Պետրոսյանին զրկել մեկ տարով եւ տուգանել 10 հազար ռուբլով:

4. Խիստ նկատողություն տալ «Կոտայքի» պետ Սուրեն Աբգարյանին եւ գլխավոր մարզիչ Նազար Պետրոսյանին: Թիմին տուգանել 50 հազար ռուբլով:

5. Առաջարկել ակումբի ղեկավարներին, թիմի ավագի պարտականություններից ազատել Սեմյոն Բեգլարյանին:

Կիսաս էր մնացել նաեւ Սեւանում տեղի ունեցած «Ախթամար»-«Արտաշատ» հանդիպումը: Երկու թիմերն էլ 1-ին խմբի մրցաշարի առաջատարներն են, եւ խաղը կարեւոր նշանակություն ուներ:

- 1-ին րոպեից դատում հակաֆուտբոլ էր գնում: Այդպիսի բան երբեք չէի տեսել: Թվում էր, ֆուտբոլիստները խաղադաշտ էին դուրս եկել միայն իրար ջարդելու: Սկզբում 2 դեղին քարտ ցույց տվեցի, դա գործին չօգնեց: 15-րդ րոպեին 2 թիմերի ֆուտբոլիստները խառնվեցին իրար: Դաշտ թափվեցին հանդիսականները: Խաղն ընդհատվեց 10 րոպով:

Այն մի կերպ վերսկսելուց հետո կոպտությունները, փոխադարձ հարվածները շարունակվում էին: Դեռ 3 անգամ դիմեցի դեղին քարտի: 2-րդ կեսի 10-րդ րոպեին «Ախթամարը» հավասարեցրեց հաշիվը: «Արտաշատի» ֆուտբոլիստները երջանկացան ինձ: Տրիբունաներում նորից իրարանցում սկսվեց: Հանդիսականները կրկին խաղադաշտ թափվեցին: Իմ հացին տղաներիներ հնչեցին, որ տանը կխփեն ինձ եւ այլն: Տեղի միլիցիան ի վիճակի չէր ապահովել անվտանգությունը: Դա, որ հանդիպումը շարունակել այլեւս հնարավոր չէ, ասաց խաղի գլխավոր մրցավար Կարեն Նալբանդյանը: Ի դեմ, 1-ին դեմքը չի, որ Սեւանի խաղադաշտում նման անկարգություններ են տեղի ունենում, եւ միլիցիայի աշխատակիցները չեն կարողանում կարգուկանոն հաստատել:

Կարգապահական կոմիտեն որոշեց.

1. «Ախթամար»-«Արտաշատ» հանդիպման հաշիվը չեղյալ հայտարարել եւ երկու թիմերին պարտություն գրանցել:

2. Սեւան խաղաքի մարզադաշտը որակազրկել 3 խաղով:

3. Երկու թիմերին տուգանել 25 հազարական ռուբլով:

4. Խիստ նկատողություն տալ «Ախթամարի» պետ Խաչիկ Սուրադյանին, գլխավոր մարզիչ Միհայել Սկրտչյանին, «Արտաշատի» գլխավոր մարզիչ Հենրիկ Սիմոնյանին եւ թիմի պետին:

5. Մրցավարին հայհոյելու համար ֆուտբոլիստներ Սոկրատ Հարությունյանին եւ Վարդան Խաչատրյանին զրկել 5 խաղով:

«Կանաչ»-«Երազանք» խաղում միմյանց հարվածելու համար հինգ խաղով զրկվել է «Երազանքի» դարպասապահ Սպարտակ Գաբրիելյանը եւ երեք խաղով՝ «Կանաչի» խաղացող Սկրտիչ Հովհաննիսյանը:

Գորիսի «Զանգեզուր» թիմի հետ հանդիպմանը չներկայանալու համար 0-3 հաշվով պարտություն է գրանցվել Մասիսի «Մասիս» թիմին:

«Շիրակ»-«Ցեմենս» խաղում մրցավարին հայհոյելու համար երեք խաղով որակազրկվել է Տիգրան Հովհաննիսյանը («Ցեմենս»): Սակայն թիմի գեկուցագրից պարզվել է, որ հայհոյողը եղել է մեկ այլ ֆուտբոլիստ՝ Արմեն Աբրահամյանը, որն ակումբի որոշմամբ ազատել է թիմից: Կարգապահական կոմիտեն համաձայնվել է այդ որոշման հետ ու նաեւ Արմեն Աբրահամյանին որակազրկել մինչեւ մրցաշրջանի վերջ:

Այդ հանդիպման գլխավոր մրցավար Անդրանիկ Բոնջուկյանի հարցը հանձնվել է մրցավարական կոմիտեի քննարկմանը, որը խաղացողներին մեղադրանք ներկայացնելիս հստակություն չի դրսեւորել: «Լույս-Արարատ»-«Արագած» հանդիպման ժամանակ մրցավարին հայհոյելու համար 3 խաղով որակազրկվել է Մհեր Մելքոնյանը («Արագած»):

Երեւանի «Հոռոմ» թիմը, իր դիմումի համաձայն հանվում է 1-ին խմբի մրցաշարից ֆինանսական դժվարությունների պատճառով, եւ այդ թիմի մասնակցությամբ մնացած հանդիպումներում մրցակիցներին հաղթանակ է շնորհվում 3-0 հաշվով:

ՀՖ առաջնություն բարձրագույն խումբ
17-րդ տուր
«Վան»-«Զվարթնոց»՝ 2-1

Թաքնվը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԴԱՇԻՆՔ-ԱԿԻՍ

ՐՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԹՈՒՉՔԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐՈՎ

ՄՈՍԿՎԱ,
ԻԺԵՎՍԿ,
ՎՈԼԳՈԳՐԱԴ,
ԱՍՏՐԱԽԱՆ

Տոմսերը վաճառվում են՝ Մաշտոցի Պողոտա 40 («Գեղարվեստական սրահ» խանութ), Մուրացանի փողոց 113/3, «Զվարթնոց» օդանավակայան, տոմսարկղ թիվ 1

Հեռ. 53-83-47, 45-25-80, 52-79-22

PUBLISET

Հայտարարություն

Շտապ հարկավոր են կարող բանվորներ: Աշխատավարձը միջինից բարձր:

Տեղեկությունների համար զանգահարել 553637 ժամը 17-22-ը:

Հայտարարություն

Հայաստանի ոչնչական մասնագիտացված խնայողական բանկը (Հայխնայբանկ) շարունակում է միջբանկային վարկերի տրամադրումը իր դաստիրատուներին: Հրավիրում ենք Հայաստանի առևտրային բանկերին եւ Հայաստանի տարածքում գործող արտասահմանյան բանկերի բաժանմունքներին ամենաբահավեստ պայմաններով օգտվելու մեր ծառայություններից:

Հասցեն՝ Երեւան, Խորենացի 28ա, հեռ. 564793

Սեպտեմբերի 23-ին

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ

Համերգ-ցուցահանդես Սեդրակ Երկանյան

(դաշնամուր, գեղանկար)

Համերգային ծրագրում՝ Է. Աբրահամյան, Հ. Դելլալյան, Ֆ. Լիստ, Ֆ. Շոպեն, Մ. Ռավել

ՀԱՄԵՐԳԻ ՀՈՎԱՆԱՎՈՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈՆԴ

Սկիզբը ժամը 17-ին:

ՏՈՄՍԵՐԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Հայտարարություն

Հանրապետական կրթության եւ գիտության նախարարության բարձրագույն կրթության դրոբլեմների գիտահետազոտական կենտրոնը բուհեր ընդունվել ցանկացողների համար հայոց լեզվից, հայ գրականությունից, հայոց պատմությունից, անգլերենից, ֆրանսերենից, ֆիզիկայից, մաթեմատիկայից, քիմիայից, կենսաբանությունից կազմակերպում է վճարովի խորացված դասընթացներ:

Ուսման տեւողությունը 9 ամիս է (հոկտեմբերի 10-ից հուլիսի 10-ը), դասադասերի սկիզբը ժամը 14:00-ին:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 5-ը, բացի կիրակի օրերից, ժամը 12:00-15:00 բարձրագույն կրթության դրոբլեմների գիտահետազոտական կենտրոնում (Երեւան, Վռամշապուհ արքայի 66, նախկին Ամիրյան փողոց):

Տեղեկությունների համար զանգահարել 53-65-32 կամ 53-78-13 հեռախոսահամարներով:

Industrial trade centre

Երեւանյան գրասենյակն առաջարկում է գործարար մարդկանց բացի Marlboro-ից մեծաքանակ ամեն տեսակ արտասահմանյան ծխախոտ: Հանձնումը Ռուսաստանում:

Մեր հասցեն՝ Երեւան, «ԱՆԻ» հյուրանոց 301, 303
Հեռախոսներ՝ 56-43-97, 59-43-01, 59-01-03

Գրասենյակը աշխատում է ժամը 10.00-18.00

PUBLISET

Լուրերի հոսք

Մամուլի ասուլիս Մայլ Ջեկսոնի այցի առթիվ

Սեպտեմբերի 13-ին Մոսկվայի «Մետրոպոլ» հյուրանոցում, Մայլ Ջեկսոնի այցի առթիվ մամուլի ասուլիս անց կացրին երգչի շրջագայության կազմակերպիչներ Մարսել Աբրամը եւ Բոբ Ջոնսը, «Դեսա» ընկերության նախագահ Սամվել Գասպարովը եւ երգչի անձնական բժիշկը: Մայլ Ջեկսոնը Մոսկվա է ժամանել սեպտեմբերի 12-ին: Նա իր խմբով զբաղեցնում է հյուրանոցի հարկերից մեկը: Ինքը՝ երգիչը զբաղեցնում է 2 համար: Ինչպես հայտարարեց նրա անձնական բժիշկը, Ջեկսոնն իրեն հիանալի է զգում: Բժիշկը նաեւ նշեց, որ նա գով եղանակին ավելի լավ է դիմանում, քան շոգին: Նա հերքեց Ջեկսոնի ինքնասպանության հակված լինելու լուրերը: Մայլ Ջեկսոնի հետ Մոսկվա է ժամանել երաժշտախումբ, որը ելույթ կունենա երգչից առաջ եւ կեզրափակի համերգի վերջին երկու ժամերը: Հայտարարվեց, որ ներկայումս մշակվում են Մայլ Ջեկսոնի 1994 թ. համաշխարհային շրջագայության ծրագրեր: Ավստրալիայում ծնողյան տոները դիմավորելուց հետո երգիչը մտադիր է այցելել 4 քաղաք, որոնցում կտա 8 համերգ: ՆՏ

Կրավչուկը կապեր ունի Սիաբեկոյի հետ

Ուկրաինայի նախագահի մամուլի ծառայությունը երկուշաբթի, սեպտեմբերի 13-ին հայտարարության մեջ ժխտել է որոշ լրատվական միջոցների այն տեղեկատվությունը, թե նախագահ Կրավչուկը կապեր ունի հայտնի զվեյցարական միլիարդատերի հետ եւ առնչություն ունի Շվեյցարիայում մի շարք առանձնատների շինարարությանը: Մամուլի ծառայության կարծիքով, ժողովրդական Ռուխի ղեկավար Վյաչեսլավ Չեռնովիլը զբաղված է աղակողմնորոշիչ լրատվությամբ, եւ վերջերս մամուլի ասուլիսում նրա պնդումները այն մասին, թե Կրավչուկը գործեր ունի «Սիաբեկո» ֆիրմայի հետ, որոնք հիմնվում են ռուսական մամուլի հրապարակումների վրա, չեն համապատասխանում իրականությանը: ԻՖ

Ղազախստանը թերեւս մտցնի սեփական մետաղադրամ

Այդ մասին ԻՖ-ի թղթակցին սեպտեմբերի 13-ին հայտնի դարձավ Ղազախստանի Ազգային բանկի ղեկավարության աղբյուրներից: Ազգային բանկի ղեկավարությունը գտնում է, որ այդ միջոցառումը կօգնի պահպանելու Ղազախստանի ֆինանսական համակարգը մինչեւ ռուբլու գոտու մեջ մտնելու հարցի վերջնական լուծումը:

Զոհեր Սամարայի նավթավերամշակման գործարանում

Սամարա քաղաքի նավթամշակման գործարանում սեպտեմբերի 13-ի երեկոյան պայթյունի հետեւանքով զոհվել է երկու եւ վիրավորվել նույնքան մարդ, ԻՖ-ին երկուշաբթի օրը հայտնեցին Ռուսաստանի արտակարգ իրավիճակների պետական կոմիտեի մամուլի կենտրոնում: Պայթյունը տեղի է ունեցել բենզինի արտադրության կայանքը հիմնանորոգման պատրաստելիս անվտանգության կանոնների խախտումների պատճառով: ԻՖ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր ՏԱԿՈՒՀԻ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh® համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի

Azg armenian daily

Editor H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Թերթի ծեւավորման եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

YEREVAN SERVICE ENTERPRISE

Երեւան-Սերվիս ձեռնարկությունը հրավիրում է Ձեզ թռիչքի ուղիղ չվերթով եւ մատչելի գներով

ԵՐԵՎԱՆ-ԱՄՄԱՆ

Մեր հասցեն Երեւան, Տիգրան Մեծ 15, հեռ 524-512, 529-948

PUBLISET

ՆՈՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ

Ձեր ընտանիքի ցանկացած չորս անդամներից յուրաքանչյուրի համար վճարելով ընդամենը 400 ռուբլի եւ գնելով 1600 ռուբլի ընդհանուր արժողության 4x100 վիճակախաղի տոմս, դուք ստանում եք բացառիկ հնարավորություն շահելու՝

1. Արտասահմանյան արտադրության ավտոմեքենա
2. Փարիզ ընտանեկան ուղեւորության չորս ուղեգիր
3. Կանխիկ գումար 4 000 000 ռուբլի

Ինչպես նաեւ կահույք, տեսա եւ լսասարքավորումներ, գորգեր, կենցաղային իրեր եւ շատ հաճելի անակնկալներ:
Մի կորցրեք ձեր ընտանիքը տնտեսական ճգնաժամից հանելու այս արտակարգ հնարավորությունը:

4x100

4x100 վիճակախաղի տոմսերը վաճառվում են մասնագիտացված կետերում

ՉՈՐՍ ԱՆԳԱՄ ՀԱՐՅՈՒՐ

PUBLISET

ՍԻՐԻԱ

ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ է ԿՈՄԵՐՑԻՈՆ ՉՎԵՐԹՆԵՐ

ՍԻՐԻԱ Երեւան-Հալեպ-Երեւան ամեն երկուշաբթի

Ցածր գներով առաջարկում է նաեւ անհատական եւ խմբային տուրիստական ճանապարհորդություններ ՍԻՐԻԱ (Հալեպ 7 օրով),

Ինֆնաթիռներում տեղեր կարող ենք հատկացնել ֆիրմաներին եւ խմբային զբոսաշրջիկներին:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՉՔԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԵԼԻ է ԻՄԱՆԱԼ 52-17-68, 58-68-17 ՀԵՌԱԽՈՍՆԵՐՈՎ:
ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՇԱԲԱԹՎԱ ԲՈԼՈՐ ՕՐԵՐԻՆ:

ՀԱՍՑԵՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 30-ԴԱՌԱԿԻՆ ԱԵՌՈՒԼԻՍՅԱՆ

PUBLISET

ONAISIS CO. LTD

☎ 594-632

«ՕՆԱԻՍԻՍ» ֆիրման շարունակում է իր գովազդային գործունեությունը եւ ընդունում է ավանդներ հետեւյալ պայմաններով

1993 թ. բողարկման թղթադրամները ընդունվում են	1961-92 թթ. բողարկման թղթադրամները ընդունվում են
3 ամիս 65%	3 ամիս 60%
6 ամիս 160%	6 ամիս 150%
9 ամիս 280%	9 ամիս 240%
12 ամիս 520%	12 ամիս 500%

Նվազագույն գումարը 100 000 ռուբլի:

«ԱՆԻ» հյուրանոց 6-րդ հարկ 632 սենյակ 5-րդ հարկ 508 սենյակ

PUBLISET

«Ազգ» թերթի խմբագրության հասցեն՝ Պարտիզակ-4, հրատ. տուն, Երեւան 23 Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասել 69149. Տպաքանակ 36 000. Պատվեր 1594 Ստորագրված է տպագրության՝ 13. 9. 1993

digitised by A.R.A.R.@